

**ՀՀ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ
Փագիկ Տեր-Չարությունյան**

Ներկայիս գլոբալացման գործընթացների առաջնային հատկանիշներից է համաշխարհային տեղեկատվական-հաղորդակցական ընդհանուր դաշտի ձևավորումը: Որպես հետեւանք՝ ազգային-պետական տեղեկատվական դաշտի¹ սահմանների այսպես կոչված «տեխնիկական պաշտպանությունը», չնայած որոշ երկրներում կատարվող փորձերի², կապված է լուրջ բարդությունների հետ: Այստեղից հետեւում է, որ պետության եւ հանրության լիարժեք տեղեկատվական անվտանգությունը (ՏԱ) կարող է պայմանավորված լինել բացառապես սեփական տեղեկատվական ռեսուրսների (մտավոր, հոգեւոր եւ տեխնիկական) հնարավորություններով եւ այդ ռեսուրսների միջոցով ձեւավորված տեղեկատվական դաշտի համակարգված ներուժով:

Միասնական տեղեկատվական դաշտի խնդիրները

Հայաստանի (ՀՀ, ԼՂՀ եւ, թերեւս, նաեւ Ջավախքի) ՏԱ ոլորտի առաջնային խնդիրներից է միասնական տեղեկատվական դաշտի ձեւավորումը: Հայտնի է, որ ներկայիս ներքին լրատվական հոսքերը հիմնականում վերաբերում են մայրաքաղաք Երեւանին եւ գրեթե չեն լուսաբանում իրավիճակն Արցախում, Ջավախքում եւ ՀՀ մարզերում: Թերեւս ժամանակն է վերականգնելու այսպես կոչված սեփական թղթակիցների ինստիտուտը, որը ժամանակին հնարավորություն էր տալիս Հայաստանի բնակչությանն իրազեկ լինել այս կամ այն շրջանում կատարվող իրադարձություններին: Այս ոլորտում պետք է կարելուրել նաեւ միասնական տեղեկատվական դաշտի բովանդակության խնդիրը:

¹ Այս բառակապակցության տակ հետագա շարադրանքում նկատի կունենանք ՋԼՄ-ի, Ինտերնետի եւ տեղեկատվության այլ աղբյուրների միջոցով ձեւավորված դաշտը:

² Այստեղ ուսանելի է, մասնավորապես, Չինաստանի փորձը, որտեղ արգելանքներ են դրվել հանրության բարոյականության նորմերը խախտող տեղեկատվական հոսքերի դեմ:

գաղտնիք չէ, որ թերացումներն այստեղ բազմաթիվ են, ինչը վտանգում է հանրության եւ անձի իրազեկ լինելու իրավունքը: Իրազեկության խնդրի համատեքստում պետք է դիտարկել նաեւ բաց աղբյուրներից ստացվող տեղեկատվության հոսքերի նպատակային մշակումը եւ այն պետական մարմիններին տրամադրելու հիերարխիկ համակարգի ձեւավորումը³:

Միասնական տեղեկատվական դաշտի ձեւավորումը նույնքան հրատապ է նաեւ Համաշխարհային Հայության անվտանգության համատեքստում: Սակայն այս խնդրի լուծումը, հասկանալի պատճառներով (բավական է նշել, որ Հայությունը սփռված է ավելի քան հարյուր երկրներում, եւ մի քանի հարյուրի հասնող համայնքների թիվն անգամ ճշգրիտ հայտնի չէ), անհամեմատ ավելի բարդ է: Այս ուղղությամբ աշխատանքները, իհարկե, ենթադրում են սփյուռք ունեցող այլ ժողովուրդների՝ մասնավորապես, հրեաների փորձի ուսումնասիրություն: Կարծում ենք նաեւ, որ Հայության միասնական տեղեկատվական դաշտի ձեւավորման խնդիրը կարող է իրատեսական լինել միայն ՀՀ ՏԱ հայեցակարգի եւ համակարգի ստեղծումից հետո միայն:

Ինֆոզեն սպառնալիքների հետ կապված խնդիրներ

Ընդունված է համարել, որ Հայաստանի եւ Հայության անվտանգությանը սպառնացող արտաքին ինֆոզեն (տեղեկատվածին) սպառնալիքների աղբյուրները գլխավորապես մի քանի ադրբեջանական եւ թուրքական լրատվամիջոցներ են: Նման մոտեցումը, անշուշտ, պարզունակ է: Սակայն անգամ վերոնշյալ լրատվամիջոցների կողմից սփռվող ակնհայտորեն սադրիչ տեղեկատվական հոսքերը չեն ենթարկվում փորձագիտական վերլուծության, չեն բացահայտվում դրանց տեխնոլոգիական եւ մեթոդաբանական առանձնահատկություններն ու ընդհանրությունները: Մինչդեռ, առանց նման աշխատանքի անհնարին է բացահայտել ինֆոզեն սպառնալիքների իրական կենտրոնները, հասկանալ նրանց նպատակները եւ ռազմավարությունը: Ակնհայտ է, որ այդ ոլորտում պետք է

³ Նկատենք, որ նման համակարգ (մասնավորապես, ԱՏԼԱՍ անվանումը կրող) գործում էր ԽՍՀՄ-ում, որի միջոցով պետական եւ կուսակցական ընտրամին (այսպես կոչված նոմենկլատուրան) բավական օբյեկտիվ տեղեկատվություն էր ստանում միջազգային քաղաքական զարգացումների վերաբերյալ: Անշուշտ, տեղեկատվական դաշտում վերջին տասնամյակում էական փոփոխություններ են տեղի ունեցել, սակայն խորհրդային փորձը, ըստ մեզ, ուսանելի է առայսօր:

օգտագործել անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերման ընդունված մեխանիզմները (ուսուցում արտասահմանյան կենտրոններում, փորձագետների հրավիրում եւ այլն) ու կիրառել դրանք գործնական հարթությունում:

Այս ամենի առիթով պետք է շեշտել, որ ուշադրության արժանի տեղեկատվության ոլորտները եւ խնդիրները տարաբնույթ են, ու դրանք ժամանակի հետ բազմանում են արագացումով: Բավական է նշել վերջին տասնամյակում մոբիլ հեռախոսների լայն տարածման շնորհիվ գոյացած այսպես կոչված «երրորդ էկրանի» (հեռուստացույցի եւ համակարգչի էկրաններից հետո) խնդիրը: SMS հաղորդագրությունները 2006թ. արաբա-իսրայելական հակամարտության ընթացքում երկուստեք լայնորեն օգտագործվում էին որպես կարելու տեղեկատվական-հոգեբանական ներգործության միջոց: Մինչդեռ մեր փորձագիտական հանրությունում գրեթե չեն շոշափվում հանրապետության տեխնիկական-էլեկտրոնային համակարգերի դեմ ուղղված ինֆոգեն սպառնալիքների հակազդեցության խնդիրները⁴:

Հստակեցման կարիք ունեն մաեւ ներքին տեղեկատվական դաշտում⁵ գործող իրավաբանական նորմերը. տեղեկատվական գործողությունները երբեմն ներկայացվում են որպես զուտ ժողովրդավարության եւ խոսքի ազատության իրավունքի արտահայտում: Մինչդեռ քիչ չեն դեպքերը, երբ դրանք իրենց բովանդակությամբ եւ ձեւով կրում են մանիպուլյատիվ բնույթ եւ ուղղված են մեր ազգային շահերի դեմ: Հարկ է նկատել, որ նման տեղեկատվական-հոգեբանական գործողությունները մի շարք արեւմտյան՝ այսպես կոչված «զարգացած ժողովրդավարության» երկրներում ենթակա են քրեական հետապնդման: Այս առիթով նշենք, որ այս

⁴ Այս կապակցությամբ տեղին է նշել, որ համաձայն ՁԼՄ-ի, ս.թ. հունվարին ԱՄՆ նախագահը ստորագրել է ՏԱ տեխնիկական ոլորտին վերաբերող երկու դիրեկտիվ, համաձայն որոնց, մասնավորապես, ամերիկյան հատուկ ծառայություններն իրավունք են ձեռք բերում նախահարձակ տեղեկատվական գործողություններ ձեռնարկել ԱՄՆ անվտանգությանը սպառնացող կենտրոնների դեմ:

⁵ Նկատենք, որ գլոբալ տեղեկատվական հարթությունում միջազգային իրավունքի համապատասխան նորմերը մշակված չեն: Մինչդեռ խնդիրը հրատապ է եւ շարունակաբար քննարկվում է միջազգային տարբեր աստիճաններում: Այս հարցում Հայաստանը, որպես տեղեկատվական պատերազմների սուբյեկտ, պետք է փորձի ակտիվ մասնակցություն ունենալ: Միեւնույն ժամանակ, գործնական հարթությունում հիմնական շեշտը պետք է դրվի տեղեկատվական ոլորտին վերաբերող ներքին իրավաբանական դաշտի ձեւավորման հարցերին:

նախագահական ընտրություններում թեկնածուներից մեկը հնչեցրեց ԼՂԴ խնդրի կարգավորման, ինչպես նաև Ադրբեյջանի եւ Թուրքիայի հետ հարաբերությունների վերաբերյալ քաղաքական թեզեր ու մոտեցումներ, որոնք ժամանակավոր զինադադարի կարգավիճակում գտնվող մեր երկրի պարագայում պետք է ստանային նաև իրավական գնահատական:

Տեսական խնդիրներ

ՏԱ տեսական ոլորտը, անշուշտ, խիստ կարելու է: Բավական է նշել, որ այսօր բացակայում են տեղեկատվական գործողությունների կամ պատերազմների վերաբերյալ միանշանակ եւ բոլորի կողմից ընդունված սահմանումներ: Որպես հետեւանք, այդ հասկացությունները մեր հանրությունում եւ, մասնավորապես, վարչական մարմինների տարբեր օղակներում, հաճախ ընկալվում են ոչ ադեկվատ ու մեկնաբանվում են յուրովի: ՏԱ համակարգի ձեւավորման առաջին փուլերում, թերեւս, անհրաժեշտ է օգտվել այդ ոլորտում համբավ վայելող հեղինակների (օրինակ՝ Թոմաս Ռոնիի, Սերգեյ Գրինյաեւի) կողմից ՏԱ հասկացություններին տրված մասնագիտական սահմանումներից: Նման մոտեցումը, անշուշտ, ենթադրում է համապատասխան եզրաբանական բառարանի ստեղծում:

Այս ամենին զուգահեռ, պետք է մշտապես հիշել, որ փորձագիտական հանրությունում անվերապահորեն ընդունված է այն դրույթը, թե ՏԱ ոլորտում, առավել քան այլ բնագավառներում, պետք է խուսափել այլ երկրների փորձի կույր փոխառությունից, քանի որ տեղեկատվական խնդիրներն ուղղակիորեն խարսխված են անհատի եւ ազգի հոգեկերտվածքի վրա ու մեծապես կախված են երկրի աշխարհաքաղաքական իրավիճակից:

Որոշ հետեւություններ

ՏԱ խնդիրներով մեր հանրությունում հիմնականում զբաղվում են միայն առանձին անհատներ: Նրանցից ոմանք ունեն բարձր պրոֆեսիոնալ մակարդակ եւ սեփական աշխարհայացքային սկզբունքներից ելնելով ամենօրյա տեղեկատվական-քարոզչական աշխատանք են վարում ու հնարավորինս դիմակայում տեղեկատվական հարձակումներին: Սակայն այդ առանձին անհատների գործունեությունը կրում է իրավիճակային, մարտավարական բնույթ: Որպես հետեւանք՝ քիչ չեն դեպքերը, երբ այս կամ այն քաղաքական խնդրի նկատմամբ ընդհանուր մոտեցումների բացակայությունը փոշիացնում է այդ անհատների ջանքերը:

Ըստ մեզ՝ տեղեկատվական քաղաքականության մշակումը ենթադրում է, առաջին փուլում, փորձագիտական մի հանձնաժողովի ստեղծում, որը կհաշվառի ինչպես մեր ունեցած տեղեկատվական ռեսուրսները, այնպես էլ ՏԱ ոլորտի հիմնախնդիրները: Հանձնաժողովի աշխատանքից ստացված արդյունքները կարող են հիմք հանդիսանալ քաղաքական դեկավարության համար՝ քայլեր կատարելու ՏԱ համակարգի ենթակառուցվածքի ձեւավորման ուղղությամբ: Դա ենթադրում է, մասնավորապես, պետական հովանավորություն ունեցող կառույցների ստեղծում: Այս համատեքստում նշենք, որ ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության եւ ՀՀ Ռազմական դոկտրինի փաստաթղթերի ստեղծումը գերազանցապես պայմանավորված էր Պաշտպանության նախարարության եւ նրա վերլուծական կառույցների առկայության փաստով: Այսինքն՝ առանց մասնագիտացված կառույցների դժվար է պատկերացնել առաջխաղացում ՏԱ ոլորտի անգամ տեսական խնդիրների ուղղությամբ:

**ՎԵՐԱՊՐԱԾ ՀԱՅԵՐ.
ԷՐՄԵՆԻ ՎԱՐՔՈՒ ԱՇԻՐԵԹԸ
Ռուբեն Մելքոնյան**

Հայոց ցեղասպանությունը պատճառ է դարձել ոչ միայն 1500 000 հայերի բնաջնջման, հազարավորների բռնի իսլամացման, այլև անձնական եւ ընտանեկան բազմաթիվ ողբերգությունների: Ինքնապահպանման եւ ապրելու բնագործ մղել է հայերին նաեւ անհավանական քայլերի: Այդպիսի բազմաթիվ օրինակներից է Էրմենի Վարթո աշիրեթ անվամբ հայկական մի գերդաստանի պատմությունը¹. նրանք կարողացել են ծանրագույն պայմաններում վերապրել, եւ նրանց գոյության փաստն անգամ տասնամյակներ շարունակ հայտնի չի եղել:

Հայոց ցեղասպանության ժամանակ աքսորվել է նաեւ Ջիզրե գավառում բնակվող հայկական Վարթո ցեղախումբը, որը եղել է բավական բազմամարդ եւ հարուստ: Ճանապարհին ենթարկվելով հարձակման՝ ցեղախմբի հինգ ընտանիքներ փախչում եւ ապաստան են գտնում հայտնի Ջուղի սարում²: Այս ընտանիքներից մեկը կոչվել է «Մալա Վարթո», այսինքն՝ Վարթոյի տուն: Լեռան վրա ապաստանած ցեղախումբը շուրջ 25 տարի արտաքին աշխարհից ինքնամեկուսացված ապրել է այնտեղ՝ տեղյակ չլինելով, թե այդ տարիներին ինչեր են կատարվել Թուրքիայում եւ ընդհանրապես աշխարհում: Անգամ չեն իմացել, որ փլուզված Օսմանյան կայսրության փոխարեն ձեւավորվել է Թուրքիայի հանրապետություն: Ցեղախումբը զբաղվել է անասնապահությամբ եւ բացառապես ներքին ամուսնություններով շարունակել է բազմանալ: Հետզհետե Վարթո ցեղախումբը յուրացրել է քրդական կենսակերպը, սկսել հագնվել քրդական տարազով, խոսել բացառապես քրդերեն, սակայն այս ամենով հանդերձ խստորեն պահպանել է ցեղային կյանքի ներփակ բնույթը՝ մասնավորապես ներքին ամուսնությունները, ինչը հնարավորություն է տվել նրանց գոնե էթնիկապես չձուլվել քրդերի հետ:

¹ Որպես հիմնական աղբյուր օգտագործել ենք Ռիդվան Աքարի՝ թուրքական «Թենփո» հանդեսում (25.01.2007) տպագրված «Ջուղիցի Ռաքելի հեքիաթը» հոդվածը:

² Ջուղի լեռը գտնվում է ներկայիս Թուրքիայի հարավ-արեւելքում, պատմական Կորդվաց աշխարհում. բարձրությունը՝ 2089 մ:

Չեռաքրքիր է, որ նրանք եղել են ծայրահեղ կրոնասեր եւ ձգտել ամեն կերպ պահպանել ու շարունակել քրիստոնեական սովորույթները: Չնայած քրդախոս Վարթո աշիրեթի հայերն իրենց մայրենիով միայն մի քանի բառ են հիշել եւ անգամ քրդերեն աղոթել, սակայն ամուսնությունների ժամանակ հրավիրել են հարեւան գյուղերի թեկուզ ասորի, նեստորական, քելդանի քահանաներին, որոնք կատարել են պսակի քրիստոնեական արարողությունը: Քրդախոս այս հայերը տասնամյակներ շարունակ ապրելով սարերում, այնուհետեւ քրդական միջավայրում՝ պահպանել են էթնիկ ինքնագիտակցությունը եւ հստակ գիտակցել իրենց տարբերությունը շրջապատող քրդերից: Կրոնական ինքնագիտակցության կարելուր եւ խոսուն ցուցանիշ կարող է համարվել այն, որ նրանք այցելել են հարեւան քելդանի-քրիստոնեական Չասանա գյուղի եկեղեցի, մահացածներին նույնպես թաղել այդ գյուղի գերեզմանատանը: Նրանք նաեւ սերտ շփման մեջ են եղել Չասանա գյուղի քրիստոնյա քելդանի բնակիչների հետ, եւ ներքին ամուսնությունները խախտելու միակ օրինակն այնտեղից բերված հարսներն են եղել:

Ցեղասպանությունից շուրջ երեք տասնամյակ հետո միայն հայկական ցեղախումբը համարձակվել է իջնել սարից եւ ականատես եղել, որ իրենց մախկին հողերին տիրացել են քրդերը:

Տասնամյակներ հետո Վարթո ցեղախմբի գոյության փաստն իմացվել է նաեւ Ստամբուլի հայկական համայնքում, եւ Չրանտ Գյուզեյլան քահանան այցելել է ցեղապետ Սիյամենթ Յաղբասանին: Երկար ընդմիջումից հետո սա այդ վերապրած հայերի առաջին հանդիպումն է եղել հայ հոգեւորականի հետ, եւ նրա այցի շնորհիվ հայկական ցեղախումբը տեղեկացել է, որ Թուրքիայում, բացի իրենցից, դեռ կան քրիստոնյա հայեր: Քահանա Գյուզեյլանն առաջարկել է ցեղապետ Սիյամենթին՝ աշիրեթի երեխաներին սովորելու ուղարկել Ստամբուլ, որտեղ նրանք հայ-քրիստոնեական կրթություն կստանային: Վարթոյի ցեղապետ Սիյամենթ Յաղբասանն ունեցել է 13 երեխա, եւ կնոջ՝ Դելալի մահից հետո նրանք դժվարին ու խնամքի կարոտ վիճակում են եղել: Բացի այդ, ինչպես նշեցինք, Վարթո աշիրեթը եղել է չափազանց կրոնասեր, նույնիսկ երեխաները շատ հաճախ անվանակոչվել են Սուրբ գրքում հանդիպող անուններով, եւ հայ հոգեւորականի առաջարկը՝ երեխաներին կրթություն տալու հետ կապված, մեծ սիրով է ընդունվել: Ցեղապետ Յաղբասանը առաջինն է օրինակ ծառայել իր ցեղակիցների առջեւ եւ համաձայնվել Ստամբուլ ուղարկել իր 9 տարեկան աղջկան՝ Ռաքելին: Այս օրինակին հետեւել են նաեւ ցեղախմբի մյուս անդամները, եւ քրդախոս շուրջ 25 երեխաներ ուղարկվել են Թուրքիայի հայկական որբանոց:

Մայրենին սովորելու եւ արձատներին վերադառնալու համար Ստամբուլ մեկնած ցեղապետ Սիյամենթ Յադբասանի աղջիկը հետագայում դառնում է Հրանտ Դինքի կինը՝ Ռաքել Դինքը: Որբանոցում Վարթո ցեղախմբի երեխաները բազմակողմանի կրթություն են ստանում, սակայն, այնուամենայնիվ, նրանց եւ որբանոցի այլ հայ երեխաների միջեւ սկզբնական շրջանում ձեւավորվում է խորթության ու օտարության մթնոլորտ, որը բնականաբար կապված էր նաեւ նրանց ապրած միջավայրի մշակութային տարբերությունների հետ: Որբանոցում ուսումնավարտելուց հետո Վարթո ցեղախմբի 25 երեխաներն արդեն չեն ցանկանում վերադառնալ գյուղ, եւ ցեղապետ Սիյամենթի գլխավորությամբ աշիրեթը որոշում է ընդունում տեղափոխվել Ստամբուլ: Մեր կարծիքով՝ այս հարցում զգալի դեր են ունեցել նաեւ Վարթո ցեղախմբի հայերի եւ նրանց հողերը բռնագրաված քրդերի միջեւ շարունակական բախումները, ինչպես նաեւ ազգային-կրոնական ինքնությունը շարունակելու համար աննպաստ պայմանները: Այսպես, 1978թ. շուրջ 500 հոգանոց էրմենի Վարթո աշիրեթը տեղափոխվում է Ստամբուլ: Հայկական համայնքը նրանց ամեն կերպ աջակցություն է ցույց տալիս, պատրիարքարանի եւ հայ գործարարների ջանքերով նրանք տեղավորվում են աշխատանքի տարբեր ոլորտներում: Սակայն ուշագրավ է, որ անգամ Ստամբուլում Վարթո աշիրեթը չի փոխում իր ներցեղային սովորույթները, այդ թվում եւ ներքին ամուսնությունները: Նրանց այս սկզբունքը կտրուկ կերպով արտահայտվում է նաեւ այն ժամանակ, երբ Հրանտ Դինքը ցանկություն է հայտնում ամուսնանալ Ռաքելի հետ, որին ճանաչել է դեռեւս որբանոցից: Վարթո ցեղի երիտասարդները սպառնում են Դինքին եւ պահանջում հրաժարվել իր այդ մտքից: Հարցը կարգավորվում է միայն այն ժամանակվա Հայոց պատրիարք Շնորհք Գալուստյանի բարձր միջամտությամբ: Նա անձամբ է ցեղապետ Սիյամենթից ուզում իր աղջկա ձեռքը, եւ կրոնասեր հայը չի կարողանում մերժել բարձրաստիճան հոգեւորականին:

1980-ական թվականների սկզբին Թուրքիայում թեժանում է ազգային-կրոնական փոքրամասնությունների դեմ թշնամանքի եւ հալածանքի մթնոլորտը, որն ավելի ընդգծված է զգացվում հայերի նկատմամբ՝ կապված նաեւ ԱՍԱԼԱ-ի գործողությունների հետ: Հայ բառն ընկալվում էր որպես հայիոյանք, հայերը համարվում էին դավաճաններ, հարձակումներ էին տեղի ունենում հայկական եկեղեցիների վրա, ռումբեր տեղադրվում հայկական դպրոցներում: Հալածանքների օրեցօր սաստկացող ալիքը ստիպում է վերապրած Վարթո աշիրեթին՝ շատ այլ հայերի նման, կրկին մտածել գոյությունը պահպանելու մասին: Ցեղի անդամների մի խումբը

գաղթում է Խորհրդային Հայաստան, սակայն նրանց այստեղ ոչ թե գործ, այլ հող են տալիս, իսկ արդեն քաղաքաբնակ Վարթո ցեղախմբի հայերը չեն ցանկանում կրկին վերադառնալ հողագործության: Ի վերջո, ցեղապետ Սիյամենթ Յաղբասանը որոշում է, որ ցեղախումբը պետք է տեղափոխվի Բելգիա, իսկ ցեղապետի որոշումը պարտադիր էր բոլորի համար: Ամբողջ Վարթո ցեղախումբը տեղափոխվում է Բելգիա, եւ այսօր Թուրքիայում նրանցից մնացել է միայն Ռաքել Դինքը: Իսկ Բելգիայում Վարթո աշիրեթի հայերը զբաղվում են դերձակությամբ, չոր քիմամաքրման աշխատանքներով, մուշտակագործությամբ եւ ապրում են նույն թաղամասերում: Հետաքրքիր է, որ նույնիսկ Եվրոպայում նրանք կրկին պահել են ցեղային սովորույթները, մասնավորապես՝ ներքին ամուսնությունները: Ավելացնենք, որ Հրանտ Դինքի այրին չի խզել կապն իր ցեղակիցների հետ եւ օրինակ՝ ներկա է գտնվել իր բոլոր եղբայրների ու քույրերի հարսանիքներին Բելգիայում, այցելում է Ջիզերում մնացած մոր շիրմին: Իր իրական ծագման մասին Ռաքել Դինքը խոսեց նաեւ Հրանտ Դինքի սպանության գործով դատական նիստի ժամանակ եւ դիմելով դատավորին ու ներկաներին՝ ասաց հետեւյալը. «Իմ պատմությունը սկսվում է 1915-ի մնացորդներից՝ Էրմենի Վարթո աշիրեթից: Ես ծնվել եմ 1959թ. Շըրնաքին ենթակա, ներկայումս Յուլադը կոչվող գյուղում, Վարթո ցեղախմբում: Վարթո անվանումը ծագում է իմ հոր պապի՝ Վարդանի անունից»:

Բավական հետաքրքիր է նաեւ, որ Վարթո աշիրեթը տարիներ շարունակ պայքարել է իրենց հողերը զավթած քրդերի դեմ, եւ ներկայումս էլ դատական գործերը շարունակվում են: Ինչպես նշում է Ռաքել Դինքը, իր հայրը՝ ցեղապետ Սիյամենթը, 2004թ. Բրյուսելում մահվան մահճում իր երեխաներից պահանջել է, որ նրանք շարունակեն հետամուտ լինել իրենց հողերը վերադարձնելու գործին:

Մեզ համար ցավալի, սակայն, անշուշտ, հետաքրքիր երեւոյթ է նաեւ այն, թե ընդհանրապես ինչպես է հնարավոր, որ հայերի նման բազմադարյա բարձր մշակույթի եւ քաղաքակրթության տեր ժողովուրդն ընդունել է իրենից անհամեմատ ավելի ցածր մշակութային հարթության վրա գտնվող քրդերի կենսակերպը, լեզուն եւ այլն: Այս երեւոյթն ուղղակի եւ անուղղակի կերպով արտահայտված է նաեւ աշիրեթային կենսակերպով ապրող, քրդախոս հայկական Վարթո ցեղախմբի մոտ: Այս հարցի առնչությամբ վերջերս շատ ուշագրավ տեսակետ է հայտնել հայտնի արեւելագետ, պրոֆեսոր Գառնիկ Ասատրյանը, համաձայն որի. «Երբ եկվոր էք ուսը՝ անկախ իր մշակութային մակարդակից, ձեռք է բերում ռազմական մշանակություն, նրա լեզուն, կենսակերպը դառնում են

գերիշխող, եւ տեղի մշակութային բնակչությունը սկսում է հարմարվել այդ նոր տարերքին»: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ համապատասխան միջավայրում ռազմիկ տարրի լեզուն, կենսակերպը համարվում են ավելի հարգի եւ պատճառ դառնում այլ ազգերի՝ նրանց նմանվելու ցանկության: Սա, մեր կարծիքով, ունի նաեւ հստակ ընդգծված հոգեբանական կողմ, այն է՝ պատկանել կամ նմանվել իշխող, ուժեղ ազգին:

Ինչեւէ, հայկական Վարթո աշիրեթի ոչ միայն գոյության, այլեւ էթնիկ-կրոնական ինքնագիտակցության պահպանման ու շարունակման փաստը տեղիք է տալիս մեկ անգամ եւս խորհել ուժացման տարբեր մակարդակներում գտնվող հայերին շրջապատող միջավայրի կարեւորության մասին: Ռաբել Յաղբասանը, եթե մնար քրդերով շրջապատված միջավայրում, լավագույն դեպքում դառնալու էր քրդախոս եւ մեծ մասամբ քրդական կենսակերպի ու մշակույթի կրող հայ եւ այն էլ իր ցեղախմբի որդեգրած կյանքի ներփակ բնույթի շնորհիվ: Հայկական միջավայրի ազդեցությամբ նա կարողացավ լիարժեք վերագտնել իր արմատները եւ դառնալ հայ կին, հայ մայր Ռաբել Դինքը:

**ԱՇԽԱՐՀ՝ ԱՌԱՆՑ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ
ԵՎ ԱՆԿԱՐԳՈՒԹՅԱՆ
Դավիթ Յովհաննիսյան**

Յամաշխարհային տնտեսական ճգնաժամը, որը ենթադրում է առանձին պետությունների տնտեսական զարգացման գործընթացում լրջագույն պրոբլեմներ, արդեն իսկ սկսել է դրսևորել իր ազդեցությունը: Գաղտնիք չէ, որ տնտեսության կայուն եւ դինամիկ զարգացման հիմնական գրավականը էներգիայի անխափան մատակարարման երաշխիքն է (քանի դեռ նոր տեխնոլոգիաներ չեն ստեղծվել): Այս հանգամանքն էլ ավելի է ակտուալացնում էներգետիկ պաշարներով հարուստ պետությունների դերը, հատկապես, եթե նրանք փորձում են իրենց ինքնուրույն քաղաքականությունն իրականացնել, որը նման պայմաններում, բնականաբար, հակասում է այդ պաշարները սպառող պետությունների շահերին:

2008թ. սկիզբը դարձավ այն ժամանակաշրջանը, երբ ռուս-ամերիկյան հարաբերությունների լարման վաղուց արդեն հասունացած միտումներն իրենց շոշափելի նոր դրսևորումները գտան: Ա.թ. փետրվարի 5-ին ամերիկյան հետախուզության տնօրեն, ծովակալ Մայքլ ՄըքՔոննելը ԱՄՆ Սենատին ներկայացրեց իր համակարգի մեջ գտնվող հատուկ ծառայությունների գնահատականներն այն վտանգների մասին, որոնք սպառնում են Միացյալ Նահանգներին, իսկ փետրվարի 6-ին պաշտպանության նախարար Ռոբերթ Գեյթսը եւ Շտաբների հրամանատարների հանձնաժողովի պետ, ծովակալ Մայքլ Մալենը ներկայացրին Պենտագոնի հաջորդ ֆինանսական տարվա համար նախատեսվող բյուջեն: Սակայն մինչ ԱՄՆ ռազմական բյուջեի քննարկմանն անցնելը նշենք, որ նախագահ Բուշի Կոնգրես ներկայացրած բյուջեն Միացյալ Նահանգների պատմության մեջ առաջին անգամ անցել է 3 տրլն դոլարի սահմանագիծը՝ կազմելով 3,1 տրլն դոլար: Նույնիսկ հաշվի առնելով դոլարի արժեզրկման գործակիցը՝ այս թիվը ռեկորդային է:

Պաշտպանության նախարարությունը պահանջել է 515,4 մլրդ դոլար, այդ թվում՝ 45,6 մլրդ՝ օդուժին, 16,9 մլրդ՝ ծովուժին, զամաքային ուժերին՝ 9,2 մլրդ, տիեզերական ռազմական ուժերի զարգացմանը՝ 10,7 մլրդ, գիտահետազոտական նպատակներին՝ 11,5 մլրդ եւ այլն: Երկու հետեւյալ տվյալները չափազանց ուսանելի են: Պենտագոնը նախատեսում է ծախսել բանակի մարտունակության մակարդակի բարձրացման համար 158,3 մլրդ, իսկ զինծառայողների բնակարանային պայմանների, բժշկական

սպասարկման, աշխատավարձերի եւ կենսամակարդակի բարձրացման համար՝ 149,4 մլրդ: Ինչպես նշում են ամերիկյան մեկնաբանները, Միացյալ Նահանգների ռազմական ծախսերն ավելի շատ են, քան աշխարհի մնացած բոլոր պետությունների ռազմական ծախսերը միասին վերցրած: Նշենք նաեւ, որ բյուջեի այլ հոդվածներով նախատեսված է եւս 91 մլրդ դոլար՝ այլ բնույթի ռազմական ծախսերի, օրինակ՝ Իրաքում եւ Աֆղանստանում ռազմական գործողություններ վարելու համար:

Շտաբների պետերի հանձնախմբի ղեկավարը նշել է իր ղեկավարած կառույցի երեք հիմնական ուղղությունները.

ա) ամերիկյան շահերի ապահովում Մեծ Միջին Արեւելքում,

բ) ամերիկյան զինուժի մոդեռնացում,

գ) գլոբալ կոնֆլիկտներին դիմակայելու պատրաստվածություն:

ԱՄՆ հետախուզության ղեկավարը, որպես հատուկ ծառայությունների առաջնային նպատակ, նախկինի պես նշել է միջազգային ահաբեկչական ցանցերի դեմ պայքարը՝ ընդգծելով, որ գլոբալացումը նոր հնարավորություններ է ստեղծել «ալ-Կաիդայի» եւ այլ նման ցանցային կազմակերպությունների համար՝ հատկապես կիբերհարձակումների առումով:

Առաջնահերթ սպառնալիքների թվում այս զեկույցում վերստին նշվել է միջուկային զենքի տարածումը, որտեղ ամենալուրջ վտանգների աղբյուր են համարվում Չյուսիսային Կորեան եւ Իրանը: Միաժամանակ, հատուկ ծառայությունների ղեկավարը կրկնել է, որ Իրանը 2003թ. կանգնեցրել է իր միջուկային զենքի ձեռքբերմանն ուղղված ծրագրերի իրականացումը, սակայն բացառված չէ, որ 2015թ. հետո նա, այնուամենայնիվ, կդառնա միջուկային զենք ունեցող պետությունների ակումբի անդամ: Հատուկ նշվել է այն հանգամանքը, որ Չյուսիսային Կորեան, համաձայն ամերիկյան հետախուզության տվյալների, իր հրթիռային տեխնոլոգիաների մի մասը վաճառել է Իրանին եւ մի քանի այլ միջինարեւելյան երկրների, ինչն ավելի լուրջ է դարձնում հյուսիսկորեական միջուկային տեխնոլոգիաների արտահոսքի վտանգը:

Հատկանշական է, որ Ռուսաստանին, ի տարբերություն պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսի զեկույցի, հետախուզության զեկույցում շատ քիչ տեղ է հատկացված: Միաժամանակ դիտորդները նշում են, որ վերջին ժամանակահատվածում այս պետության անունն առաջին անգամ է հայտնվում հետախուզության զեկույցում: Հարցը մատուցվում է հետեւյալ կտրվածքով՝ Ռուսաստանի, Չինաստանի եւ մի քանի նավթագազային պաշարներով հարուստ պետությունների ֆինանսական հնարավորությունները թույլ են տալիս այս երկրներին ավելի էֆեկտիվ կերպով լուծել իրենց քաղաքական խնդիրները, ինչը սպառնալիք է հանդիսանում Միացյալ Նահանգների ազգային անվտանգության համար:

Այսպիսով, դատելով թե՛ ամերիկյան ռազմական գերատեսչության բյուջեի կառուցվածքից, թե՛ հետախուզության ղեկավարի զեկույցի եզրակացություններից, այնքան էլ հասկանալի չէ, թե ինչու է միջազգային մամուլն այսքան սրություն հաղորդում ռուս-ամերիկյան հարաբերությունների ներկայիս վիճակի քննարկումներին: Հասկանալի է, որ Կոսովոյի հարցի շուրջ եղած տարածայնությունները եւ գործարքները որոշակի էմոցիոնալ երանգ են հաղորդել դրանց: Հասկանալի է նաեւ, որ Վ.Պուտինի մյուսխենյան ճառը իր կնիքն է դրել այս քննարկումների եւ վերլուծությունների վրա: Այս ամենին պետք է ավելացնել նաեւ նախընտրական կրքերը Միացյալ Նահանգներում, որտեղ բոլոր թեկնածուներն իրենց վերաբերմունքն են դրսևորել երկու երկրների միջեւ հարաբերությունների զարգացման հիմնահարցին (նշենք, որ այս ուղղությամբ տեսակետներն առանձնապես չեն տարբերվում):

Ուրեմն ի՞նչ է խնդիրը: Անշուշտ, երկու պետությունների միջեւ գոյություն ունեն լուրջ հակասություններ: Դրանք հիմնականում վերաբերում են ամերիկյան ծրագրերին՝ Եվրոպայում հակահրթիռային պաշտպանության համակարգերի տեղադրման, ՆԱՏՕ-ի հետագա ընդլայնման, հետխորհրդային պետություններում ազդեցության ծավալման, ամերիկյան «երեք ծովերի համակարգի» նախագծի իրականացմանն ուղղված քաղաքական ռազմական միջոցառումներին եւ այլն: Միաժամանակ, առկա է համագործակցության անհրաժեշտությունը գլոբալ անվտանգության հետ կապված բոլոր ոլորտներում եւ հարթություններում:

Կարելի է ենթադրել, որ ռուս-ամերիկյան հարաբերությունների ներկայիս վիճակը պայմանավորված է նաեւ գրեթե աննկատ անցած ռուս-չինական մի նախաձեռնությամբ, որն ուղղված է տիեզերքի ապառազմականացմանը եւ արդեն իսկ մտել է ՄԱԿ-ի համապատասխան հանձնաժողով՝ Անվտանգության խորհրդում քննարկումների համար մշակվելու նպատակով: Միացյալ Նահանգներն առայսօր եւ տեսանելի ապագայում կասկածի տակ չդրվող առավելություն ունի տիեզերքում: Այս առավելությունը թույլ է տալիս Միացյալ Նահանգներին հավակնել ղեկավարման այնպիսի համակարգեր ստեղծելուն, որոնց շնորհիվ հնարավոր կլինի ավելի ռացիոնալ կերպով կառավարել գլոբալ ենթակառուցվածքները, այսինքն՝ համաշխարհային տնտեսությունը: Տիեզերքում գերիշխելով՝ Միացյալ Նահանգները ոչ միայն կկարողանան պաշտպանել իրենց ինֆորմացիոն համակարգերը կիբերհարձակումներից, այլ նաեւ իրենք այդ սպառնալիքի տակ կդնեն աշխարհի մյուս բոլոր պետությունների կենսապահովման համակարգերը:

Սա հարցի մի կողմն է: Հարցի մյուս կողմը կապված է պետությունների զարգացման հիմնական միտումների հետ: Եթե Միացյալ Նահանգների

Որոշումը կատարող էլիտայի համար այն կապված է համակարգային տրանսֆորմացիայի գաղափարի հետ, որը ենթադրում է ամերիկյան ժողովրդավարական կաղապարի տարածում եւ որից նույնիսկ այս վարչակազմին հաջորդող որեւէ էլիտա չի կարողանա հրաժարվել, ապա եվրամիության համար հիմնական գաղափարը՝ օրենքի գերակայությունն է, որը նույնպես արժեքային հիմք ունեցող մոդել է հանդիսանում եւ ուրեմն քաղաքակրթական հոսքերով տարածվում է նրա կենսական շահերի գոտիներում: Այս հակասությունները լուծելի են արեւմտյան մշակութային ընդհանրական դաշտում, սակայն մուտք գործելով եվրասիական մշակութային տարածքներ՝ դրանք ոչ միայն բախվում են սկզբունքային արժեքային հնչեղություն ունեցող խոչընդոտների, այլ նաեւ սրվում են հակասությունները հենց իրենց միջեւ: Արժեքային հակասությունները «իրական քաղաքականության» մեջ ստանում են զեկույցների, ելույթների, ճառերի, բայց նաեւ զորքերի եւ նավատորմների տեղաշարժման, ռազմաքաղաքական համաձայնությունների տեսք:

Կա եւս մեկ դիտարկում. վրա հասնող համաշխարհային տնտեսական ճգնաժամին նախապատրաստվելու համար անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, որպեսզի սեփական տնտեսությունները նվազագույն կորուստներ կրեն: Այդ նպատակով ռազմական բյուջեն ուժեղացվում է, որպեսզի ազգային ընկերություններն ապահովված լինեն պետական պատվերներով, ինչը թույլ կտա խուսափել լուրջ սոցիալական հետեւանքներից: Սակայն չար լեզուներն ասում են, որ տրանսնացիոնալ ընկերությունների հետ կապված՝ Բուշերի ընտանիքը նախագահական շրջանն ավարտելուց եւ Սպիտակ տունը լքելուց առաջ կատարում է այն խոստումները, որոնք տրվել էին էներգետիկ եւ ռազմարդյունաբերական հսկաներին:

Ամենայն հավանականությամբ, այս ամենն անցողիկ բնույթ ունի: Ինչպես գրում է ամերիկյան հանրաբան Ադամ Դանիել Ռոթֆելդը, «չկա որեւէ նշան, որ վկայի այն մասին, թե համաշխարհային տերություններն իրար դեմ նախահարձակման են պատրաստվում»: Բազմաթիվ կոնֆլիկտների եւ միջազգային ահաբեկչության ազդեցության հետեւանքով արմատացած անորոշության զգացումը, որը լրացվում է մեր դարաշրջանի ոգուն հատուկ անկանխատեսելիությամբ, տրամաբանորեն հանգեցնելու է առաջատար պետությունների համագործակցությանը, ինչն առաջին հերթին բխում է հենց նրանց շահերից: Անհրաժեշտություն է դարձել ձեւավորել 21-րդ դարի ինֆորմացիոն քաղաքակրթությանը համապատասխանող քաղաքական փիլիսոփայություն:

Ավարտելով՝ մի մեջբերում հայտնի վերլուծաբան Ռոբերտ Կուպերից. «Կա նոր աշխարհ, սակայն չկա նոր աշխարհակարգ, բայց չկա եւ նոր համաշխարհային անկարգություն»:

ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Սարգիս Հարությունյան

Իրավիճակային վերլուծություն

Չնայած անցած տարվա դեկտեմբերի սկզբին Միացյալ Նահանգների Ազգային հետախուզական խորհրդի (ԱՅԽ, National Intelligence Council) հրապարակած զեկուլյցի գլխավոր հետեւությունն էր, թե, ամենայն հավանականությամբ, Իրանը դադարեցրել է իր միջուկային զենքի ծրագիրը 2003թ. աշնանը, իսկ 2007թ. դեկտեմբերի վերջին էլ Պենտագոնը հրապարակեց ոչ պակաս կարեւոր մի տեղեկություն, թե անցած տարվա վերջին երեք ամիսների ընթացքում Իրաքում գրոհայինների հարձակումները նվազել են 62%-ով, սակայն փաստն այն է, որ ԱՅԽ հրապարակումից հետո տարածաշրջանային դինամիկան բնութագրող կարեւոր ոչ մի հարցում իրավիճակի փոփոխություն չի գրանցվել եւ, ինչն էլ ավելի կարեւոր է, այդպես էլ չեն երեւում հնարավոր փոփոխության նշանները:

❖ 2007թ. նոյեմբերի վերջին ամերիկյան Անապոլիսում կայացած իսրայելա-պաղեստինյան խաղաղության համաժողովից հետո ոչ միայն չգրանցվեց որեւէ առաջընթաց, այլեւ իրադրությունն էլ ավելի սրվեց ու դարձավ բարդ կառավարելի այս հունվարի 23-ից հետո, երբ պաղեստինյան «Համաս» խմբավորման զինյալները մի քանի տեղ պայթեցրին Գազայի հատվածը Եգիպտոսից բաժանող պատը՝ ճանապարհ բացելով «Համասի» համար անհրաժեշտ ապրանքների ու զենքի ներկրման համար, ինչպես նաեւ սկիզբ դնելով Սինայի թերակղզու ապակայունացմանը:

❖ Շարունակում է լարված մնալ իրավիճակը Լիբանանում՝ կապված այդ երկրի նոր նախագահի ընտրության եւ ընդհանրապես ներքաղաքական կայունության հետ: 2007թ. աշնանից Լիբանանի խորհրդարանը 14 անհաջող փորձից հետո այդպես էլ չի կարողանում ընտրել երկրի նոր ղեկավար¹:

¹ Հիշեցնենք, որ նախկին նախագահ Էմիլ Լահուդի լիազորությունների ժամկետն ավարտվել է 2007թ. նոյեմբերի վերջին:

❖ 2009թ. դեկտեմբերի 15-ին ավարտվելու է իրաքյան այս խորհրդարանի լիազորությունների ժամկետը, մինչդեռ անորոշ է մնում երկրի հետագա կառուցվածքի ու կառավարման համակարգի հարցը, լուծված չէ նավթի եկամուտների բաշխման խնդիրը, ամենագլխավորը՝ առայժմ չեն երեւում այդ հարցերի հանգուցալուծման հնարավոր տարբերակները:

Բայց ներկա իրավիճակը բնութագրող կարելու առանձնահատկությունն այն է, որ 2007թ. վերջի համար իրատեսական համարվող հետեւությունը, թե ԱՅԽ նման զեկույցը եւ Իրաքում իրավիճակի որոշակի հանդարտեցումը վկայում են ԱՄՆ–Իրան փոխհամաձայնության մասին, այլեւս պետք է վերագրել մինչեւ 2007թ. դեկտեմբեր ընկած ամերիկա-իրանական հարաբերություններին: Այն, ըստ էության, 2003թ. իրաքյան պատերազմից հետո Մերձավոր Արեւելքում ի հայտ եկած իրողությունների նկատմամբ կոնսենսուսային համատեղ դիրքորոշման փորձ էր Վաշինգտոնի ու Թեհրանի կողմից: Սակայն գլխավոր հարցը մնում է բաց.

❖ ԱՄՆ ԱՅԽ զեկույցը եւ դրան զուգահեռ Իրաքում զինյալների հարձակումների թվաքանակի նվազման փաստը չեն կարող եւ նպատակ էլ չունեին ամրագրել ամերիկա-իրանական տարածաշրջանային նոր status quo-ն,

❖ թեւ նշված զեկույցն ու փաստը հիմք հանդիսացան ներկայում ընթացող ամերիկա-իրանական բանակցությունների համար, բայց Վաշինգտոն–Թեհրան մերձավորարեւելյան նոր փոխհամաձայնությունը (եթե, իհարկե, կա այդպիսի նպատակ) դեռեւս բանակցությունների առարկա է, եւ թե ինչ իրավիճակ ու տրամաբանություն կունենանք տարածաշրջանում՝ տակավին անհայտ է:

Եվ վերջապես, պակաս կարելու չէ Իրանին առնչվող ամերիկյան ԱՅԽ վերջին զեկույցին իսրայելական կողմի անհամաձայնության փաստը: Իրականությունն այն է, որ Իրանի միջուկային խնդրի վերաբերյալ այսօր պաշտոնական թեւ Ավիվը ոչ միայն ներկայացնում է ամերիկյանից էապես տարբերվող գնահատական, այլեւ հարկ է համարում Վաշինգտոնի հետ առաջացած այդ հակասություններին տալ հրապարակային բնույթ: Սակայն դժվար թե նշվածը վկայի, որ Մերձավոր Արեւելքի հարցում Թեհրանի հետ պայմանավորվածությունների գնացող Վաշինգտոնում, օրինակ, որոշել են հաշվի չառնել տարածաշրջանում իրենց միակ ռազմավարական դաշնակցի շահերը: Ավելի հավանական է, որ ամերիկա-իրանական ընթացող բանակցություններում հրեական կողմը դեռ չի

տեսնում իր ռազմավարական անվտանգությունը երաշխավորող կետեր: Բայց եթե դա այդպես է, ապա ամերիկա-իրանական այսօրվա բանակցությունները չեն կարող միտված լինել տարածաշրջանային նոր փոխդասավորվածության ստեղծմանը: Հետեւաբար, եւ Վաշինգտոնի, եւ Թեհրանի համար միմյանց վրա ներազդելու բոլոր տարբերակները շարունակում են մնալ բաց:

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ մենք գործ ունենք սկզբունքորեն այլ իրավիճակի հետ, քան մեզ երեւում էր 2007թ. դեկտեմբերին:

Իրանի միջուկային կարողություններ. նոր գնահատակա՞ն

2008թ. փետրվարի 5-ին Միացյալ Նահանգների Ազգային հետախուզության տնօրեն Ջոն Մայքլ ՄըքՔոննելը, ով, հանդիսանալով ԱՄՆ հետախուզական հանրության ղեկավարը, փաստորեն, համակարգում է այդ երկրի 16 հետախուզական գործակալությունների աշխատանքը, ԱՄՆ Սենատի Հետախուզության հանձնաժողովին ներկայացրեց «Վտանգի տարեկան գնահատական» (Annual Threat Assessment) զեկույցը: Փաստաթղթի՝ Իրանին վերաբերող մասում գլխավորապես առանձնացված է երկու հետեւություն.

❖ Իրանը շարունակում է աշխատանքներն ուրանի հարստացման ոլորտում, եւ միջուկային զենքի ստեղծման համար անհրաժեշտ հարստացված ուրան կարող է ստանալ արդեն 2010–2015թթ. ժամանակահատվածում (ինչպես հայտնի է, միջուկային զենքի ստեղծումը համեմատաբար հեշտ է, ավելի դժվար է ստանալ այդ զենքի ստեղծման համար անհրաժեշտ նյութերը),

❖ Իրանն աշխատանքներ է տանում հեռահար հրթիռների պատրաստման ուղղությամբ²:

Թեեւ նշված հետեւություններն ինքնին որեւէ նորություն չեն պարունակում եւ, օրինակ, հարստացված ուրանին վերաբերող մասը նույնությամբ վերցված է 2007թ. դեկտեմբերի 3-ին հրապարակված ԱՄՆ

² Փաստաթղթում (DNI, Annual Threat Assessment) նշված է հետեւյալը. «Չնայած առնվազն 2007թ. կեսի տվյալների համաձայն, դադարեցված էին Իրանի միջուկային զենքերի մշակման եւ ուրանի կոնվերսիայի ու հարստացման գաղտնի աշխատանքները, [սակայն] Իրանը շարունակում է ճեղքվող նյութերի (fissile materials) ու միջուկային [մարտագլխիկ կրելու] հնարավորություն ունեցող հրթիռների ստացման աշխատանքները»:

ԱՅԻՆ Իրանին վերաբերող փաստաթղթից (NIC, Iran: Nuclear Intentions and Capabilities), սակայն ուշադրություն է գրավում հետևյալը.

❖ ի տարբերություն ԱՅԻՆ 2007թ. դեկտեմբերյան զեկույցի, ՄըքՔոնեյլի ներկայացրածը կրկին առաջին պլան է մղում իրանական միջուկային եւ հրթիռային ծրագրերի վտանգավորությունը ԱՄՆ-ի համար,

❖ աստիճանաբար ի հայտ են գալիս նշաններ, որոնք թույլ են տալիս ենթադրել, թե հիմք ընդունելով նույն ԱՅԻՆ զեկույցը՝ ամերիկյան կողմը ձգտում է փոխել շեշտադրումները, ինչը կարող է բերել ԱՅԻՆ զեկույցի թողած քաղաքական հետեւանքների արժեզրկմանը,

❖ եւ երրորդ, ներկայացվածն էլ ավելի իրական է թվում, եթե հաշվի առնենք վերջին մի քանի շաբաթներին Իրանի միջուկային ու հրթիռային ոլորտներում տեղ գտած իրադարձությունները³:

2007թ. դեկտեմբերի 10-ին ելույթ ունենալով Բահրեյնի մայրաքաղաք Մանամայուն հրավիրված անվտանգության հարցերով միջազգային համաժողովում՝ ԱՄՆ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը Իրանի առնչությամբ առանձնացրեց երկու կետ: Առաջին, ԱՄՆ ԱՅԻՆ զեկույցը «բարձր վստահությամբ (high confidence)» նշում է, որ նախկինում թեհրանն ունեցել է միջուկային զենքի ստեղծման ծրագիր ու շարունակում է ունենալ այդպիսի զենք ստեղծելու հնարավորություն: Երկրորդ, Իրանն աշխատանքներ է տանում միջին հեռահարության հրթիռների ստեղծման ուղղությամբ, որոնք, սակայն, արդյունավետ են միայն այն դեպքում, եթե կրում են միջուկային մարտագլխիկ:

2008թ. հունվարի 16-ին ԱՄՆ Ղրթիռային պաշտպանության գործակալության տնօրեն, զեներալ Ջենրի Օբերինգը հայտարարեց, թե Իրանն

³ 2008թ. փետրվարի 4-ին Իրանը հաջողությամբ իրականացրեց «Սաֆիր-1» անվամբ նոր հրթիռի փորձարկում, որը, հանդիսանալով 4 000 կմ հեռահարություն ունեցող «Շահաբ-3» հրթիռի մոդիֆիկացված տարբերակը, ուղեծիր դուրս բերեց իրանական արհեստական արբանյակը: Փետրվարի 6-ին հայտնի դարձավ, որ Իրանում ձեռնամուխ են եղել նոր՝ «P-2» ցենտրիֆուգների փորձարկմանը, որոնք 2-3 անգամ ավելի արագ են հարստացնում ուրանը, քան մինչ այդ թեհրանի տրանսպորտային ներքո եղած «P-1»-երը: Եվ վերջապես, փետրվարի 13-ին ամերիկյան «Associated Press» լրատվական գործակալությունը գրեց, թե Իրանը սեփական տեխնոլոգիաներով կարողացել է ստանալ ուրանային գազ, որն անհրաժեշտ է ցենտրիֆուգների աշխատանքի համար՝ մի խնդիր, որը նախկինում անլուծելի էր իրանական կողմի համար:

արագացրել է հեռահար հրթիռների ստեղծման աշխատանքները, որոնք կարող են հասնել Եվրոպայում տեղակայված ամերիկյան ռազմակայաններին:

Եվ վերջապես, փետրվարի 13-ին հանդես գալով կոնգրեսական լսումներում՝ ԱՄՆ Ազգային հետախուզության տնօրենի տեղակալ Թոմաս Ֆինգերը կրկին առանձնացրեց այն կետը, թե Իրանն ունի տեխնիկական ու արդյունաբերական հնարավորություններ միջուկային զենք ստեղծելու համար:

Չեղարկումներ

Չնայած ամերիկա-իրանական բանակցություններին եւ նախորդ տարվա երկրորդ կեսին կողմերի միջեւ տեղ գտած պայմանավորվածությանը, Վաշինգտոն-Թեհրան հակասությունների առարկա հանդիսացող էական բոլոր կետերում շարունակում են պահպանվել տարածայնությունները:

Սակայն այլևս հարկ է որպես մերձավորարեւելյան իրավիճակի բնութագրիչներ դիտարկել ոչ թե իրանա-ամերիկյան գծում տեղ գտնող փոփոխությունները, այլ տարածաշրջանում ի հայտ եկող նոր իրողությունները ռազմատեխնիկական ու աշխարհաքաղաքական դաշտերում: Հավանական է, որ Մերձավոր Արեւելքում որպես որոշիչ գործոններ սկսեն հանդես գալ:

❖ Ջանգվածային ոչնչացման զենքերի ուղորտում նկատվող ձեռքբերումները մերձավորարեւելյան տերությունների զինանոցում: Պատահական չէ, որ վերջին երկու-երեք ամիսներին հատկապես արեւմտյան փորձագիտական շրջանակները լրջորեն քննարկում են մերձավորարեւելյան միջուկային պատերազմի սցենարները:

❖ Գրեթե փլուզման եզրին հայտնված Իրաքի, Աֆղանստանի ու Պակիստանի տարածաշրջանային դերակատարման էական թուլացմամբ պայմանավորված՝ աշխարհաքաղաքական նոր կոնստրուկցիաների առաջացումը. օրինակ, այսօր Արեւմուտքում նպատակահարմար է դիտվում ներգրավել Իրանին՝ այդ երկրներում կայունության հաստատման համար:

**ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ
ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ
Սեւակ Սարուխանյան**

2008թ. սկզբին տարածաշրջանում տեղ գտան կարելոր նշանակության էներգետիկ զարգացումներ, որոնցից կարելորագույնն, անկասկած, ճգնաժամն է Իրանի եւ Թուրքմենստանի միջեւ, որն, իր հերթին, լուրջ ազդեցություն կունենա Իրան-Թուրքիա, Իրան-Ադրբեջան հարաբերությունների վրա:

2007թ. հոկտեմբերին Թուրքմենստանի նախագահ Կ.Բերդիմուհամեդովի կողմից ստեղծված Ռազմավարական պլանավորման եւ տնտեսական զարգացման ինստիտուտը 2007-ի դեկտեմբերին ներկայացրեց իր առաջին զեկույցը, որն, ըստ էության, Թուրքմենստանի էներգետիկ քաղաքականության հնարավոր փոփոխությունների սկիզբը հանդիսացավ: Չեկույցի համաձայն՝ երկրի հետագա կայուն զարգացումն ապահովելու համար հարկավոր է ոչ միայն նպաստել արտասահմանյան ներդրումների կայուն հոսքին եւ ազատականացնել երկրի տնտեսական կյանքը, այլ նաեւ նպատակաուղղված կերպով բարձրացնել թուրքմենական գազի գինը բոլոր գնորդների համար: Գնի բարձրացման հիմնական նշանակությունը ոչ միայն պետական եկամուտների ավելացումն է, այլ նաեւ ԵՄ-ի հետ ընդհանուր էներգետիկ ռազմավարության ստեղծումը՝ հիմնված բաց շուկայական մեխանիզմների կիրառման սկզբունքի վրա:

2007-ին Թուրքմենստանը բարձրացրեց Ռուսաստանին եւ Չինաստանին վաճառվող գազի գինը, իսկ Պեկինը 2008-ի հունվարի 21-ին Թուրքմենստանի հետ կնքած պայմանագրով համաձայնեց 1000 մ³-ի համար վճարել \$195, որի \$50-ը Աշգաբադը պետք է ուղղի Թուրքմենստան-Չինաստան գազատարի կառուցման աշխատանքների ֆինանսավորմանը: Միեւնույն ժամանակ, փորձագետների եւ իրանական կողմի համար իսկական անակնկալ դարձավ Թուրքմենստանի անսպասելի որոշումը՝ հունվարի 1-ից դադարեցնել գազի արտահանումը Իրան: Անակնկալն այն էր, որ թուրքմենական ղեկավարությունը գազի մատակարարումն Իրանին կասեցրեց առանց իրանական ղեկավարության հետ գազի գնի շուրջ բանակցություններ սկսելու: Մատակարարման կասեցումը հիմնավորելով զուտ տեխնիկական պատճառներով՝ թուրքմենա-

կան կառավարությունը միայն մեկ շաբաթ անց թեհրանին տեղեկացրեց, որ չի վերականգնի գազի արտահանումն Իրան, եթե թեհրանը չհամաձայնի 1000 մ³-ի համար ներկայիս \$75-ի փոխարեն վճարել \$150: Նման քաղաքականությունը կարելի է բնութագրել որպես վերջնագրային, քանի որ գազի մատակարարման դադարեցումը տեղի ունեցավ անգամ Իրանի համար հարաբերականորեն ցուրտ ձմռանը, մանավանդ եթե հաշվի առնենք, որ Իրանի հյուսիսային շրջաններն օգտագործում են միայն թուրքմենական գազ, իսկ երկրի հարավում արտադրվող բնական գազը հյուսիս տեղափոխելու համար իսլամական հանրապետությունը գրեթե ոչ մի տեխնիկական հնարավորություն չունի:

Այս համատեքստում Իրանի ԱԳՆ խոսնակի՝ թուրքմենական կառավարության քայլին տված «անբարոյական» գնահատականը, թերևս, արդարացված է: Միեւնույն ժամանակ, թուրքմենստանի քայլը կարելի է գնահատել ոչ միայն բարոյականության, այլ նաև միջազգային իրավունքի կատեգորիաներով: Իրանի պետական գազային ընկերության փոխնախագահ Ի.Գամբարին հայտարարել է, թե թեհրանը, բացի Ազգաբաղի հետ իր հարաբերություններում ճշգրտումներ մտցնելուց, պատրաստվում է դիմել Միջազգային դատարան՝ թուրքմենստանի անօրինական քայլից կրած կորուստների փոխհատուցման հայցով:

Ինչեւէ, ակնհայտ է, որ Իրանի եւ թուրքմենստանի էներգետիկ համագործակցությունը հիմնովին կասեցվելու հեռանկարի առջև է կանգնած: Ստորեւ փորձենք ներկայացնել թուրքմենստանի քաղաքականության փոփոխման վերաբերյալ այն հիմնական տեսակետները, որոնք այսօր կան:

Ռեսուրսների բացակայություն. Ռուսաստանի հետ էներգետիկ համագործակցության խորացման եւ Չինաստանի հետ համագործակցության պայմաններում թուրքմենստանը կանգնել է գազի անհրաժեշտ պաշարների բացակայության խնդրի առջև: Հենց այս պատճառով էլ թուրքմենստանը հրահրել է Իրանի հետ հարաբերությունների ճգնաժամը, որի արդյունքում երկարաժամկետ կտրվածքով կդադարեցվի գազի մատակարարումն այդ երկրին: Այս մոտեցումը, մեր կարծիքով, միայն մասամբ կարող է բացատրել ստեղծված իրավիճակը, քանի որ տարեսկզբին գազի սակավության խնդիր թուրքմենստանը չի ունեցել, եւ գազի արտահանման ծավալները Ռուսաստանի ուղղությամբ կտրուկ չեն ավելացել:

Թուրքմենստանը խաղում է Ռուսաստանի օգտին. Կասեցնելով գազի արտահանումը դեպի Իրան՝ թուրքմենստանը լուրջ վնաս հասցրեց

իրանա-թուրքական էներգետիկ համագործակցությանը, քանի որ Թեհրանը սեփական կարիքները հոգալու համար ստիպված եղավ կասեցնել գազի արտահանումը Թուրքիա: Արդյունքում՝ Ռուսաստանն ավելացրեց գազի մատակարարումը Թուրքիային «Երկնագույն հոսք» գազատարի միջոցով, իսկ Անկարայում եւ Բոյուսեյում սկսեցին խոսել այն մասին, որ Իրանը եւ Թուրքմենստանը չեն կարող համարվել «Նաբուքքո» գազատարի նախագծի հուսալի մասնակիցներ: Սա լուրջ հարված էր Իրանի համար, քանի որ դեռ 2007-ի դեկտեմբերին Իրանի ԱԳՆ ղեկավար Մ.Մոթաքին հայտարարել էր, թե Իրանը նպատակ ունի մասնակցել նախագծին եւ ստորագրել էր Իրան–ԵՄ էներգետիկ համագործակցության սկզբունքների մասին դեռեւս 2004-ին մշակված համաձայնագիրը: Այս ամենը, ակնհայտորեն, բխում է Ռուսաստանի շահերից, որը երկարաժամկետ տեսակետից կարողացել է Թուրքմենստանին առաջարկել վերջինիս համար ձեռնտու համագործակցության փաթեթ-ծրագիր:

Թուրքմենստանը խաղում է ԵՄ օգտին. Համաձայն թուրքմենական ղեկավարության վերջին հայտարարությունների՝ ստորագրման է պատրաստվում Թուրքմենստան–ԵՄ էներգետիկ համագործակցության համաձայնագիրը: Հաշվի առնելով այն, որ թուրքմենական գազը ԵՄ հասնում է 2 ճանապարհով՝ Իրան եւ Ռուսաստան, Աշգաբադը որոշել է կասեցնել Իրանի միջնորդությունը Եվրոպայի հետ համագործակցությունում եւ օգտվել զուտ ռուսական ճանապարհից կամ խթանել Տրանսկասպյան գազատարի կառուցումը, որը հնարավորություն կտա օգտագործել Բաքու–Էրզրում գազատարի ներուժը՝ Թուրքիա եւ ԵՄ գազի արտահանման տեսանկյունից: Այս վարկածի դեմ են խոսում հիմնականում դեռեւս չկարգավորված թուրքմենա-ադրբեջանական էներգետիկ վեճերը եւ ՌԴ–ԵՄ էներգետիկ հարաբերությունների անկատարությունը: Մյուս կողմից, թուրքմենա-իրանական գազային վեճի հիմնական զոհը դարձավ հենց Թուրքիան, քանի որ Իրանը ստիպված եղավ կասեցնել գազի արտահանումն այս երկիր՝ սեփական կարիքների ապահովման անհրաժեշտությունից ելնելով: Նշենք, որ Թուրքիայի կառավարության քննադատությանն արժանացան թե՛ Իրանը, թե՛ Թուրքմենստանը, եւ այս առումով, Աշգաբադի քաղաքականությունը մեկնաբանել Բաքու–Էրզրում գազատարին միանալու ձգտմամբ՝ այնքան էլ հիմնավորված չէ:

Համենայնդեպս, ներկայումս իրանա-թուրքմենական հարաբերությունները Թուրքմենստանի անկախացումից հետո ամենախոր ճգնաժամն են ապրում, եւ դրա արդյունքներից մեկը կարող է լինել Իրանի հարաբերությունների ակտիվացումն Ադրբեջանի ուղղությամբ:

* * *

Երկրի հյուսիսային հատվածին գազի մատակարարումն ապահովելու համար Իրանը մոտակա տարիներին նախատեսում է զարգացնել սեփական էներգատրանսպորտային ենթակառուցվածքը: Սակայն հնարավոր է նաեւ, որ Թեհրանը գնա Բաքվի հետ էներգետիկ համաձայնագրերի կնքման ճանապարհով: Այս հնարավորության առաջին վկայությունն է փետրվարի 1-ին «Ազերիգազ» ՓԲԸ գործադիր տնօրեն Ա.Մելիքովի հայտարարությունն այն մասին, թե Ադրբեջանի պետական նավթային ընկերությունը պատրաստվում է գազի մատակարարման պայմանագիր կնքել Իրանի հետ: Ըստ տարեսկզբին ներկայացված տվյալների՝ 2008-ին Ադրբեջանում գազի արտադրությունը կավելանա մոտավորապես 55%-ով, իսկ Ադրբեջան-Իրան վերանորոգված գազատարը հնարավորություն կընձեռի մինչև 3 մլրդ մ³ գազ արտահանել Իրան: Սա Իրանի հյուսիսում սպառման 1/3-ն է կազմում, ինչը չի կարող փոքր քանակություն համարվել:

Մ.Մոթաքին հունվարին հայտարարել էր, թե չի բացառում Իրանի տարածքի օգտագործումն Ադրբեջանից Թուրքիա գազի արտահանման համար՝ հաշվի առնելով, որ Իրանի խոշորագույն գազային հանգույց համարվող Թավրիզ քաղաքը բավական մոտ է Ադրբեջանի սահմանին:

Ակնհայտ է, որ Իրանի հետ էներգետիկ տրանսպորտային նախագծերի իրականացման հարցի վերաբերյալ Ադրբեջանի որոշումը մեծ մասամբ կախված է Բաքվի՝ Արեւմուտքի հետ հարաբերություններից: Սակայն Իրան-Արեւմուտք հարաբերությունների հնարավոր լավացումը, Վրաստանում քաղաքական անկայունության խորացումը եւ իրանա-թուրքական հարաբերությունների հետագա զարգացումը կարող են բերել այս հարցի շուրջ Բաքվի քաղաքականության փոփոխության: Միեւնույն ժամանակ, Իրանն Ադրբեջանի հետ էներգետիկ երկխոսության հետագա զարգացման եւս մեկ կարելոր լծակ ունի. այդ երկիրն է հիմնականում ապահովում Նախիջեւանի գազամատակարարումը, ինչպես նաեւ՝ էլեկտրամատակարարումը: Այս պարագայում, Իրանի հետ էներգետիկ հարաբերությունները խորացնելու Ադրբեջանի շահագրգռվածությունն ունի օբյեկտիվ պատճառներ:

ԻՍԼԱՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ **Արաքս Փաշայան**

2008թ. փետրվարի 9-ին թուրքական խորհրդարանը, երկարատև վիճաբանությունից հետո, երկրորդ ընթերցմամբ ընդունեց բարձրագույն ուսումնական հաստատություններում մահմեդական գլխաշոր՝ *թյուրբան* կրելու վրա դրված արգելքը չեղյալ հայտարարելու մասին օրինագիծը՝ փոփոխություններ մտցնելով երկրի Սահմանադրության 10 և 42 հոդվածներում: Որոշման օգտին կողմ է քվեարկել 550 տեղանոց թուրքական խորհրդարանի 401 պատգամավոր: Օրենքի ուժ ստանալու համար այն պետք է ստորագրի երկրի նախագահը, ով արդեն տվել է իր համաձայնությունը:

Գլխաշորի արգելքի վերացումը հիմնավորվում է մարդու կրոնական իրավունքների և ազատությունների մոտիվով, այսինքն՝ Եվրամիության չափորոշիչներով, որին Թուրքիան ձգտում է անդամակցել: Նշվում է, որ շատ աղջիկներ, կրոնական համոզմունքներից ելնելով, հրաժարվում էին առանց գլուխը ծածկելու համալսարան հաճախել:

Թուրքիայում գլխաշորի թեմայի շուրջ պարբերաբար ի հայտ եկող բանավեճերը վերստին ակտիվացան 2007թ. հուլիսի խորհրդարանական ընտրություններին և հատկապես 2007թ. օգոստոսի նախագահական ընտրություններում ԱԶԿ-ի հաղթանակից հետո: Վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանն այս հարցի շուրջ առաջին անգամ պաշտոնապես խոսեց 2007թ. սեպտեմբերին՝ դիտարկելով այն որպես հասարակության ժողովրդավարացմանն ուղղված քայլ: Նախքան այդ, նա որևէ անգամ չի հայտարարել, որ ընդլայնելու է իսլամի իրավունքները Թուրքիայում:

Թյուրբանը իսլամական տիպի գլխաշոր է, այսինքն՝ ծածկում է գլուխն ամբողջությամբ և պարանոցը: *Չադրան* կամ *փարանջան*, որ քողարկում է երեսը և տարածված է շատ արաբական իսլամական երկրներում, նախկինի պես արգելված կմնա: Համաձայն իշխող շրջանակների՝ Թուրքիայում կանանց 2/3-ը գլխաշոր է կրում, այնպես որ, խորհրդարանական որոշումը հասարակական աջակցություն է գտել: Հատկանշական է, որ գլխաշոր են կրում Թուրքիայի վարչապետի, նախագահի և բարձրաստիճան մի շարք այլ պաշտոնյաների կանայք ու աղջիկները: 2002թ. Աբդուլահ Գյուլի կինը՝ Հայրունիսիա Գյուլը,

Եվրադատարան էր դիմել այն բանից հետո, երբ նրան գլխաշոր կրելու պատճառով չէին ընդունել Անկարայի համալսարան:

Գլխաշորի արգելքի վերացումը ձգտում է վիճարկել երկրի աշխարհիկ ընդդիմությունը, առաջին հերթին՝ Սահմանադրական դատարանը և գինվորականությունը:

Աշխարհիկ ընդդիմության մեջ առանձին շերտ են կազմում թուրքական համալսարանների ռեկտորները, որոնցից շատերի կարծիքով՝ գլխաշորի արգելքի վերացումը վնասում է ժողովրդավարությանը: Դեռևս 2007թ. սեպտեմբերին թուրքական համալսարանների ռեկտորների խորհուրդը մի հայտարարություն տարածեց, որում նշված էր, թե Սահմանադրության մեջ ուղղում մտցնելու շարժառիթները հիմնավորված չեն, և որ Սահմանադրությամբ ամրագրված աշխարհիկության, հանրապետականության, ազգայնականության և այլ սկզբունքներ պետք է անփոփոխ մնան: Համալսարանական շրջանակներում մտավախություն կար, որ գլխաշորի մասին Սահմանադրության մեջ փոփոխություն մտցնելուց հետո *թյուրքան* կրելը համատարած կդառնա դպրոցներում և լիցեյներում:

Նման հնարավորության վերաբերյալ մտավախությունը հիմնավորվեց: Արդեն փետրվարի 10-ին գլխաշորի վերաբերյալ խորհրդարանական որոշումից մեկ օր անց Կեսարիայում, Քոնյայում և Վանում ի պաշտպանություն գլխաշորի տեղի ունեցան հանրահավաքներ, որոնց մասնակիցները գլխաշորի վերաբերյալ օրենքի մեջ փոփոխությունը բավարար չէին համարում, քանի որ հիմնահարցը վերաբերում է ոչ միայն ուսանողուհիներին, այլև՝ բարձր դասարանների աշակերտուհիներին:

Հատկանշական է, որ այս հարցին «մեծ նպաստ» կարող է բերել 2007թ. դեկտեմբերին Կրթության բարձրագույն հանձնաժողովի քենալիստ նախագահ Է.Թեզիչին իր պաշտոնում փոխարինած իսլամամետ գործիչ Յ.Օզջանը, ով արդեն հայտարարել է, որ իր գործունեության շրջանակներում ձգտելու է վերացնել այն բոլոր արգելքները, որոնք ոտնահարում են ուսանողների իրավունքները:

Երկրի աշխարհիկության սկզբունքների պահպանման համար շարունակում են պայքարել թուրքական հասարակության լիբերալ շրջանակները: Պատահական չէ, որ նախքան խորհրդարանի որոշումը և որոշման ընդունումից հետո էլ Թուրքիայի մայրաքաղաքում և Ստամբուլում տեղի ունեցան բազմամարդ հանրահավաքներ, որոնց մասնակիցները վստահ են, որ Թուրքիան պետք է մնա աշխարհիկ երկիր:

Ընդդիմախոսների կարծիքով, պարզ չէ՝ *թյուրքանի* հարցը կրոնական, թե՞ քաղաքական մոտիվներ ունի: Այս տեսանկյունից ուշագրավ է

թուրքական հետազոտական հիմնադրամի՝ TESEV-ի իրականացրած հարցախույզը, որի համաձայն՝ Թուրքիայում կանանց 71,5 տոկոսը գլխաշոր կրում է կրոնական մոտիվով (հիմնվելով սուրբ գրքի «Ան-ճուր» սուրահի 31-րդ այաթի վրա), 7,6 տոկոսը՝ կոլեկտիվիզմի մոտիվից ելնելով, 3,9 տոկոսը *թյուրքանը* դիտարկում է որպես իր ինքնության անբաժան մաս, 3,4 տոկոսը՝ որպես բարոյականության ցուցիչ, 1,7 տոկոսը գլխաշոր է կրում հասուն տարիքի պատճառով և միայն 0,4 տոկոսն է *թյուրքանը* համարում իր քաղաքական հայացքների խորհրդանիշը:

Աշխարհիկ ընդդիմադիրների համոզմամբ՝ ԱԶԿ-ն պաշտպանում է ոչ թե կրոնականացված կանանց հետաքրքրությունները, այլ դիտում *թյուրքանը* որպես աշխարհիկ համակարգի դեմ պայքարի միջոց: Այդ նպատակին հասնելու համար իշխանությունն օգտագործում է արևմտյան եզրաբանություն՝ մարդու իրավունքների և օրենսդրության ժողովրդավարացման վերաբերյալ:

Ակնհայտ է, որ գլխաշորի արգելքի վերացումը, որին ԱԶԿ-ն հասարակական մեծ հնչեղություն տվեց, իրականում մի քայլ է երկրի իսլամականացման ուղղությամբ: Կրոնը սկսում է աստիճանաբար մուտք գործել հասարակական ոլորտ, ինչն ավելի շատ քաղաքական շարժառիթներ ունի: Եթե իշխանություններն իրապես մտահոգված են կանանց հիմնահարցերով, ապա պետք է հաշվի առնեն առավել կարևոր հանգամանքներ: Թեկուզ այն, որ կանայք, առավելապես գյուղական շրջաններում, բախվում են սոցիալական մի շարք խնդիրների հետ, որոնց լուծումը ոչ պակաս կարևոր է, քան գլխաշորը:

Չի բացառվում, որ հետագայում, ունենալով գլխաշորի նախադեպը, Թուրքիայում հասարակական դիսկուրսի առարկա դառնան և ապա լեգիտիմացվեն իսլամական կամ շարիաթական այլ սկզբունքներ: Չի բացառվում նաև, որ Թուրքիայի փորձը կարող է նախադեպ դառնալ տարածաշրջանի իսլամական երկրներում, ասենք՝ Ադրբեջանում, կենտրոնական ասիական հանրապետություններում, ընդհուպ՝ Ռուսաստանի թյուրքական երկրամասերում: Հայտնի է, որ կենտրոնաասիական առանձին հանրապետություններում դատարանները մի շարք անգամներ մերժել են բարձրագույն կրթական հաստատություններում սովորող և գլխաշոր կրել ցանկացող ուսանողուհիների հայցը:

Այսպիսով, Ռեջեփ Թայիփ Էրդողանի գլխավորած Արդարություն եւ զարգացում կուսակցությանը հաջողվեց իր համար ցանկալի փոփոխություններ մտցնել երկրի Սահմանադրության մեջ: Սակայն առանձին փորձագետներ կանխատեսում են, որ գլխաշորի մասին նոր օրենքն իր

հետ ցնցումներ կբերի, քանի որ աշխարհիկ ընդդիմադիրները պատ-
րաստվում են դիմել Սահմանադրական դատարան՝ պահանջելով ոչ միայն
անօրինական ճանաչել օրինագիծը, այլև լուծարել Արդարություն եւ
զարգացում կուսակցությունը: Նշենք, որ 1997-ին գինվորականները
լուծարեցին իսլամամետ վարչապետ Էրբաքանի կառավարությունը, իսկ
1998-ին Թուրքիայի Սահմանադրական դատարանի որոշմամբ երկրի
աշխարհիկ հասարակարգին ուղղված վտանգ ներկայացնելու մեղա-
դրանքով լուծարվեց Էրբաքանի գլխավորած իսլամամետ Բարօրության
կուսակցությունը, որի իրավահաջորդը, ըստ էության, ԱԶԿ-ն է: Այնպես որ,
դեպքերը կարող են կրկնվել:

**ԷԹՆՈԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ
ԱՄՆ «ՄԵԾ ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ» ԾՐԱԳՐՈՒՄ
Միխայիլ Յուրեւ**

2007թ. կեսերին, Մերձավոր եւ Միջին Արեւելքում սահմանների կանխատեսվող փոփոխությունների առիթով, մի շարք արեւմտյան ռազմաքաղաքական վերլուծաբանների կողմից զանգվածային լրատվամիջոցներում կազմակերպվեց քարոզչական կամպանիա: Հիմնավորելով իրադարձությունների նման զարգացման «օբյեկտիվ անհրաժեշտությունը»՝ նրանք պնդում էին, որ տվյալ պահին այդ տարածաշրջաններում գոյություն ունեցող պետական կազմավորումները չեն արտացոլում էթնիկական ընկերակցությունների բնակության պատմականորեն ձեւավորված շրջանների ուրվագծերը: Որպես արդյունք, համաձայն նշված աղբյուրների պնդման, առկա պետական սահմանները կրում են «անբնական բնույթ», հրահրում են անկայունություն, միջդավանական եւ միջէթնիկական հակասություններ, կրոնական ծայրահեղականության տարբեր ձեւերի առաջացում եւ, վերջին հաշվով, միջազգային ահաբեկչության տարածում: Սույն տեսակետը, ըստ էության, հանդիսացել է որպես ԱՄՆ վարչակազմի կողմից Մերձավոր եւ Միջին Արեւելքում անցկացվող ռազմաքաղաքական կուրսի արդարացում: Նման պնդումները, մասնավորապես, դեռեւս 2006թ. արտացոլվել են ԱՄՆ զինված ուժերի պաշտոնաթող գեներալ Ռալֆ Պիտերսի՝ «Armed Forces Journal» հանդեսի հունիսյան համարում հրատարակված «Արյունոտ սահմաններ. Մերձավոր Արեւելքը կարող էր ավելի լավ տեսք ունենալ» հոդվածում:

Չեղինակի կարծիքով, Մերձավոր եւ Միջին Արեւելքում ներկայումս ձեւավորված միջազգային սահմանները զգալի չափով արհեստական են, չեն արտացոլում բնակչության էթնիկ բաժանման իրական պատկերը եւ այդ կապակցությամբ մոտ ապագայում կենթարկվեն փոփոխությունների: Այդ փոփոխությունները կարող են տեղի ունենալ ինչպես ռազմական բախումների արդյունքում, որոնք կարող են ծագել տարածաշրջանի երկրների միջեւ հարաբերությունների կտրուկ սրման պատճառով, այնպես էլ այդ երկրներում միջէթնիկական ու միջդավանական հակասություններով պայմանավորված ներքաղաքական ցնցումների հետեւանքով: Այսպիսով, հեղինակի եզրահանգմամբ, տարածաշրջանային անվտանգության ապահովման եւ ռազմաքաղաքական իրադրության կայունության

ամրապնդման համար տարածաշրջանում միջպետական սահմանների փոփոխություններն անխուսափելի են: Կանխատեսվող փոփոխությունները ամփոփիչ աղյուսակի տեսքով ներկայացված են *Հավելվածում*:

Չեղինակի գնահատմամբ, առավել խոշոր փոփոխություններ կկրի Իրաքը: Նրա տարածքը, ըստ բերված կանխատեսումների, բաժանվում է երեք անկլավի՝ սուննիական, քրդական եւ շիական. ընդ որում, սուննիական անկլավը կձգտի Սիրիային միավորման, քրդականը, ամենայն հավանականությամբ, կվերածվի նոր քրդական պետության մասի, իսկ շիականը, իր հերթին, կդառնա նոր Արաբական շիական պետության մաս:

Խիստ հատկանշական է, որ տվյալ կանխատեսումը մասամբ ամրագրվում է ԱՄՆ ՁՈւ միացյալ կենտրոնական հրամանատարության հրամանատար, գեներալ Ջ.Աբիզայիդի եւ ԱՄՆ ՁՈւ շտաբի պետերի կոմիտեի նախագահ, գեներալ Պ.Փեյսի արտահայտած կարծիքով, որը նրանց կողմից շարադրվել է 2007թ. սկզբին, ԱՄՆ Կոնգրեսի զինված ուժերի գործերով հանձնաժողովի լսումներում: Նրանց գնահատմամբ, Իրաքում ներքաղաքական իրավիճակը մնում է ծայրահեղ լարված՝ քաղաքացիական պատերազմի ծագման մեծ հավանականությամբ: Սույն կարծիքը համընկնում է Իրաքում Մեծ Բրիտանիայի նախկին դեսպան Ու.Փեթի դիրքորոշմանը, որն արտաքին գործերի նախարարությանն ուղղված զեկուցագրում նշել է, թե Իրաքում իրադարձությունների առավել հավանական զարգացումը «դանդաղ ընթացող քաղաքացիական պատերազմն է ու երկրի փաստացի տրոհումը»:

Ուշադրության են արժանի հոդվածի հեղինակի կանխատեսումները տարածաշրջանում մի ամբողջ շարք նոր պետական կազմավորումների՝ Քրդական պետության, Արաբական շիական պետության, Իսլամական սրբազան պետության, Բելուջիստանի պետության առաջացման հավանականության վերաբերյալ: Այսպես, Ռալֆ Պիտերսի հավաստմամբ, անկախ քրդական պետության ստեղծումը պայմանավորված է տարածաշրջանում զգալի թվով քրդերի (27-ից մինչեւ 36 մլն մարդ) բնակության փաստով, որոնք չունեն սեփական պետականություն: Նրա գնահատմամբ, նոր պետական կազմավորումը կարող է ընդգրկել Իրաքի (Իրաքյան Քուրդիստան), Թուրքիայի, Իրանի, Սիրիայի քրդական շրջանները: Այս պետությունը, ինչպես կանխատեսվում է, կբնութագրվի հստակ արտահայտված ամերիկամետ եւ արեւմտամետ արտաքին քաղաքական կուրսով:

Իր հերթին, կանխատեսվող Արաբական շիական պետության կազմում կմտնեն Իրաքի առավելապես շիա բնակչությամբ հարավային նահանգները, Իրանի հարավարեւելյան շրջանների մի մասը (շիա արաբ բնակչու-

թյամբ) եւ Սաուդյան Արաբիայի Արեւելյան նահանգը (նավթահանքերով՝ նույնպէս առավելապէս շիա արաբ բնակչութեամբ շրջանները) եւ, հողվածի հեղինակի գնահատմամբ, այն ավելի շուտ հանդես կգա որպէս տարածաշրջանում ռազմաքաղաքական ուժերի հաշվեկշռի ապահովման միջոց, քան որպէս Իրանի դաշնակից:

Չեղինակը կանխատեսում է նաեւ Սաուդյան Արաբիայի փլուզում՝ «որպէս արիեստական պետական կազմավորման՝ աճող ներքին խնդիրներով, առանց դրանց լուծման իրական հեռանկարների», եւ, որպէս արդյունք, Իսլամական սրբազան պետության ստեղծում, որը կընդգրկի համաիսլամական սրբություններ Մեքքան ու Մեդինան: Ենթադրվում է, որ նորաստեղծ պետությունը կարող է լինել Վատիկանի իսլամական համատիպը՝ կառավարման հավաքական ձեւով, ի դեմս հիմնական իսլամական աստվածաբանական դպրոցների ներկայացուցիչների խորհրդի:

Այսպիսով, ԱՄՆ վարչակազմը ներգործության տեղեկատվահոգեբանական մեթոդները դիտում է որպէս Մերձավոր եւ Միջին Արեւելքում իր ռազմաքաղաքական կուրսի ապահովման արդյունավետ միջոցներից մեկը: Տվյալ փուլում նկատվում է ամերիկյան ղեկավարության կողմից ներգործության նշված մեթոդների ակտիվ օգտագործում՝ նախեւառաջ իր կողմից անցկացվող տարածաշրջանային քաղաքականության հիմնավորման համար:

Այս առումով, Մերձավոր եւ Միջին Արեւելքի տարածաշրջանում սեփական քաղաքական կուրսի իրականացման համար ԱՄՆ վարչակազմից հարկավոր է սպասել ներգործության տեղեկատվահոգեբանական մեթոդների օգտագործման շարունակում* եւ այդ պրակտիկայի մասշտաբների ընդլայնում:

www.iimes.ru

Մերձավոր Արեւելքի ինստիտուտ

* 2006թ. հունիսին ամերիկյան «Armed Forces Journal» հանդեսում Ռալֆ Պիտերսի հանրահայտ հոդվածից հետո, այս տարի մեջտեղ եկան թեմային առնչվող միանգամից մի քանի հրապարակումներ՝ «The Atlantic Monthly»-ում հայտնի հեղինակ Ջեֆրի Գոլդբերգի նյութը՝ «After Iraq», «The Atlantic Council» վերլուծական կենտրոնի պատրաստած զեկույցը՝ «Saving Afghanistan: An Appeal and Plan for Urgent Action» եւ այլն: - *Խմբ.*:

Չավելված: ԱՄՆ «Մեծ Մերձավոր Արեւելք» ծրագրի շրջանակներում՝ Մերձավոր, Միջին Արեւելքի ու Պարսից ծոցի գոտու իսլամական պետությունների սահմանների կանխատեսվող փոփոխությունները

№	Պետություն	Սահմանների կանխատեսվող փոփոխությունները	Կանխատեսվող փոփոխությունների շարժառիթը/ հիմնավորումը
Մերձավոր Արեւելքի պետություններ			
1.	Սիրիայի Արաբական Հանրապետություն	Ծովամերձ գոտու կորուստ, որն իր ողջ երկայնքով կանցնի Լիբանանին:	Տվյալ գոտին պատմականորեն հանդիսանում է այսպես կոչված Մեծ Լիբանանի մաս, նրա բնակչությունը կողմնորոշված է Լիբանանի հետ միավորման:
2.	Լիբանանի Հանրապետություն	Սիրիայի Արաբական Հանրապետության ծովամերձ գոտու միացում:	Տես 1 կետը:
3.	Իրաքի Հանրապետություն	<p>Երկրի տարածքի տրոհում երեք անկլավի՝ սուննիական, քրդական, շիական:</p> <p>Իրաքյան պետության նախկին կառուցվածքների մնացորդների պահպանում առավելապես սուննի բնակչությամբ արեւմտյան եւ կենտրոնական շրջաններում (Անբար նահանգը, Սալահ-էդ-Դին, Դիյալա, Նայնավա նահանգների մի մասը)՝ հեռավոր ապագայում Սիրիային նրանց միավորման հավանականությամբ:</p>	Ներքաղաքական իրադրության կայունացման իրական նշանների բացակայություն: Միջերկրական եւ միջդավանական հակասությունների սրում: Էթնիկական հատկանիշներով քաղաքացիական պատերազմի ծագման հավանականության անշեղ աճ: Քրդական եւ շիա համայնքների ղեկավարության հետեւողական կուրս՝ սեփական պետական կազմավորումների ստեղծման ուղղությամբ:

		<p>Քրդական ինքնավար շրջանի հյուսիսային նահանգների վերածումն ու Քրդական պետության մասի (տես 15 կետը):</p> <p>Առավելապես շիա բնակչությամբ հարավային նահանգների վերածումն ու Արաբական շիական պետության մասի (տես 16 կետը):</p>	
4.	Չորդանանի Հաշիմիտյան Թագավորություն	Սաուդյան Արաբիայի Թագավորության մի մասի միացում:	Տվյալ շրջանը պատմականորեն հանդիսանում է այսպես կոչված Մեծ Չորդանանի մաս. այստեղ բնակվող կլանները էթնիկապես կապված են Չորդանանին եւ կողմնորոշված են Հաշիմիտյան Թագավորության հետ միավորման:
Պարսից ծոցի եւ Արաբական թերակղզու պետություններ			
5.	Սաուդյան Արաբիայի Թագավորություն	<p>Թագավորության՝ որպես պետական կազմավորման փլուզումն ներկայումս գոյություն ունեցող սահմաններում:</p> <p>Զգալի տարածքների կորուստ, որոնք կանցնեն հյուսիսում՝ Չորդանանին (տես 3 կետը), հարավում՝ Եմենին (տես 11 կետը), արեւելքում՝ նոր Արաբական շիական պետությանը (տես 16 կետը), արեւմուտքում՝ նոր Իսլամական սրբազան պետությանը (տես 17 կետը):</p>	<p><i>Ներքին շարժառիթներ.</i> թագավորությունն իրենից ներկայացնում է արհեստական պետական կազմավորում՝ աճող ներքին խնդիրներով, առանց դրանց լուծման իրական հեռանկարների:</p> <p><i>Արտաքին շարժառիթներ.</i> արաբական աշխարհում նկատվում է դժգոհության աճ՝ կապված աս-Սաուդ կլանի (որն առնչվում է իսլամի վահաբական ուղղությանը) կողմից Մեքքայի ու Մեդինայի</p>

			համախառնական սրբությունների կառավարման հետ:
6.	Արաբական Միացյալ Էմիրություններ	Որոշ էմիրությունների հնարավոր կորուստ, որոնք այդ դեպքում կմտնեն Արաբական շիական պետության կազմի մեջ:	Առանձին էմիրությունների բնակչությունն էթնիկապես կապված է շիա արաբներին եւ կողմնորոշված է նոր պետական կազմավորման (Արաբական շիական պետություն) հետ միավորման՝ նրա ստեղծման դեպքում:
7.	Քուվեյթի պետություն	Սեփական պետական կազմավորման պահպանում գոյություն ունեցող սահմաններում:	
8.	Օմանի Սուլթանություն	Սեփական պետական կազմավորման պահպանում գոյություն ունեցող սահմաններում:	
9.	Բահրեյնի Թագավորություն	Սեփական պետական կազմավորման պահպանում գոյություն ունեցող սահմաններում:	
10.	Կատարի պետություն	Սեփական պետական կազմավորման պահպանում գոյություն ունեցող սահմաններում:	
11.	Եմենի Հանրապետություն	Սաուդյան Արաբիայի Թագավորության մի մասի միացում:	Սաուդյան Արաբիայի հարավային շրջաններում բնակվող կլաններն էթնիկապես կապված են Եմենին եւ կողմնորոշված են նրա հետ միավորման:

Միջին Արելեյքի պետություններ			
12.	Իրանի Իսլամական Հանրապետություն	<p>Տարածքի մի մասի կորուստ, որը կանցնի նոր պետական կազմավորումներին. հյուսիս-արեւմուտքում՝ Քրդական պետությանը (տես 15 կետը), հարավ-արեւմուտքում՝ Արաբական շիական պետությանը (տես 16 կետը), հարավ-արելեյքում՝ Բելուջիստանի պետությանը (տես 18 կետը):</p> <p>Տարածքի կորստի հավանականություն հյուսիս-արեւմտյան ուղղությամբ, որը կարող է անցնել այսպես կոչված Միացյալ Ադրբեջանին:</p> <p>Աֆղանստանի տարածքի մի մասի (Չերատ բնակավայրի շրջանում) միացում:</p>	<p>Իրանի այժմյան պետական սահմանների անկայուն բնույթը՝ կապված էթնիկական ընկերակցությունների զգալի քանակի առկայության հետ, որոնք հարկադրաբար միավորվել են գոյություն ունեցող պետական կազմավորմանը:</p> <p>Տվյալ շրջանի բնակչությունը պատմականորեն եւ էթնիկապես կապված է Իրանին:</p>
13.	Աֆղանստանի Իսլամական պետություն	<p>Տարածքի կորուստ արեւմտյան մասում՝ Չերատ բնակավայրի շրջանում, որը կանցնի Իրանին:</p> <p>Պակիստանի հյուսիս-արեւմտյան սահմանամերձ շրջանի միացում արելեյքում:</p>	<p>Տես 12 կետը:</p> <p>Տվյալ շրջանի բնակչությունը պատմականորեն եւ էթնիկապես կապված է Աֆղանստանին:</p>
14.	Պակիստանի Իսլամական Հանրապետություն	<p>Սահմանամերձ շրջանի կորուստ հյուսիս-արեւմուտքում, որը կանցնի Աֆղանստանին:</p>	<p>Տես 13 կետը:</p>

		Տարածքի կորուստ Բելուջի շրջանում, որը կանցնի նոր Բելուջիստանի պետությանը:	Տվյալ շրջանի բնակչությունը պատմականորեն եւ էթնիկապես ձգտում է պետական անկախության:
Նոր պետական կազմավորումներ			
15.	Քրդական պետություն	Նոր պետական կազմավորումը կընդգրկի Իրաքի (Իրաքյան Քուրդիստան), Թուրքիայի, Իրանի, Սիրիայի քրդական շրջանները:	Տարածաշրջանում ապրում է 27-ից մինչեւ 36 մլն քուրդ: Քրդական ղեկավարությունն անցկացնում է սեփական պետական կազմավորման ստեղծման պլանաչափ ու հետեւողական կուրս:
16.	Արաբական շիական պետություն	Նոր պետական կազմավորումը կընդգրկի Իրաքի հարավային շրջանները, Սաուդյան Արաբիայի Արեւելյան նահանգը, Իրանի հարավարեւմտյան ծովամերձ գոտիները (Պարսից ծոցի ջրային տարածքները), ԱՄԷ-ի առավելապես շիա արաբ բնակչությամբ առանձին էմիրություններ:	Իրաքի շիա համայնքի ղեկավարությունն անցկացնում է սեփական պետական կազմավորման ստեղծման պլանաչափ ու հետեւողական կուրս: Տես 5, 6, 12 կետերը:
17.	Իսլամական սրբազան պետություն	Նոր պետական կազմավորումը կընդգրկի տարածքներ համաիսլամական սրբություններ Մեքքայի ու Մեդինայի շրջանից:	Տես 5 կետը:
18.	Բելուջիստանի պետություն	Նոր պետական կազմավորումը կընդգրկի Իրանի հարավարեւելյան եւ Աֆղանստանի հարավային՝ էթնիկապես միատարր բնակչությամբ շրջանները:	Տվյալ շրջանի բնակչությունը պատմականորեն եւ էթնիկապես ձգտում է պետական անկախության:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԱԴՈՔՍՆԵՐԻՑ. ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ֆրանսիացի մաթեմատիկոս մարքիզ դը Կոնդորսեն առաջինը ձեւակերպեց կամքի ժողովրդավարական արտահայտման հիմնարար խնդիրը: 1785թ. նա հրապարակեց «Էսսե մեծամասնության որոշումների հավանականության վերլուծության կիրառման մասին», որտեղ բանաձեւեց «Կոնդորսեի պարադոքսը». մեծամասնության (օրինակ՝ ընտրողների) անհատական նախապատվությունները ոչ միշտ են արտացոլվում նմանատիպ հավաքական որոշումներում (օրինակ՝ ընտրությունների արդյունքում):

1952թ. ամերիկացի տնտեսագետ եւ մաթեմատիկոս Քենեթ Արոուն հրապարակեց «Սոցիալական ընտրություն եւ անհատական արժեքներ» նշանային գիրքը, որտեղ ձեւակերպեց «Արոուի պարադոքսը» (այդ եւ ուրիշ աշխատանքների համար 1972թ. նա տնտեսագիտության բնագավառում արժանացավ Նոբելյան մրցանակի): Արոուն առանձնացրեց ժողովրդավարական ընտրությունների 5 նորմ, որոնք հանդիսանում են ընտրողների մեծամասնության կամքի որոշման մեխանիզմներ: Նա ապացուցեց, որ սկզբունքորեն անհնար է ստեղծել ընտրական համակարգ, որի շրջանակներում չխախտվի այդ նորմերից գոնե մեկը:

Անգլիացի տնտեսագետ, փիլիսոփա ու սոցիոլոգ Ամարթյա Սենը (1998թ. տնտեսագիտության բնագավառում ստացել է Նոբելյան մրցանակ) շարունակեց Կոնդորսեի եւ Արոուի մտորումների ընթացքը եւ մշակեց «սոցիալական ընտրության» տեսությունը: Սենի կարծիքով, լայն համաձայնության առկայության դեպքում, հասարակության կատարած ընտրությունը կասկած չի հարուցում: Եթե կարծիքները բաժանվում են, ապա խնդիրն այն է, որպեսզի գտնել տարբեր կարծիքներն ի մի բերելու միջոցներ: Եվ հենց այստեղ սկսվում են պրոբլեմները, քանզի իրական ընտրությունների պայմաններում, բոլորին բավարարող որոշումներ գտնելն անհավատալիորեն բարդ է, եթե ընդհանրապես հնարավոր է:

Կոնդորսեի, Արոուի եւ Սենի գաղափարներն այժմ հիմք են ծառայում այդ ոլորտում շատ հետազոտությունների համար: Ամերիկացի մաթեմատիկոս Դոնալդ Սաարին «Որոշումները եւ ընտրությունները. բացատրելով անսպասելիք» ու «Քառասյին ընտրություններ» գրքերում ապացուցում է,

որ Արոուի եւ Սեմի տեսությունները ճիշտ են ամենեւին ոչ բոլոր դեպքերի համար: Նրա կարծիքով, նման վարկածներն արհեստականորեն պարզեցնում են խնդիրը՝ ուղղակի հաշվի չառնելով շատ գործոններ: Ըստ Սաարիի, ընտրություններն անհամեմատ ավելի հաճախ են տալիս անսպասելի արդյունքներ, քան ընդունված է համարել. նրանց արդյունքները շատ դեպքերում արմատապես տարբերվում են ընտրողների սկզբնական ցանկություններից (դա վերաբերում է ոչ միայն իշխանության մարմինների ընտրություններին, այլեւ մրցանակների դափնեկիրների որոշմանը, ընկերությունների տնօրենների խորհուրդների ընտրություններին եւ այլն): Սաարին հակված է դրանում մեղավոր համարել ո՛չ ընտրողներին եւ ո՛չ էլ իշխանությանը (եթե, անշուշտ, ընտրություններն անցնում են արդար), այլ քվեարկության ոչ համարժեք ընթացակարգերը:

Ավստրալացի գիտնականներ Ջեֆրի Բրենանը եւ Լորեն Լոմասկին «ժողովրդավարությունը եւ որոշումը» գրքում ապացուցում են, որ քվեարկության ժամանակ պատասխանատու եւ տեղեկացված ընտրողը հաճախ ընդունում է ամենեւին ոչ լավագույն որոշումը: Քաղաքական գործիչներին կամ կուսակցություններին կողմ քվեարկելու փոխարեն, որոնք, օբյեկտիվ չափանիշներով, ընդունակ են ավելի լավ պաշտպանել նրա շահերը, ընտրողը հաճախ ղեկավարվում է բնավ ոչ բանականության ձայնով, այլ ինչ-որ ուրիշ շարժառիթներով: Բրենանը եւ Լոմասկին վերլուծեցին Ավստրալիայի, ԱՄՆ ու Մեծ Բրիտանիայի «նշանային» քվեարկությունների արդյունքները եւ հայտնաբերեցին ընտրողների կողմից ընդունված միանգամայն ոչ տրամաբանական որոշումների բազմաթիվ փաստեր: Ընդ որում, ինչն առավել ապշեցուցիչ է, մինչ ընտրությունների օրը շատ ընտրողներ ունենում են մեկ տեսակետ, սակայն գալով ընտրական տեղամասեր՝ այն փոխում են հակառակի:

Գրքի հեղինակները պնդում են, թե ընտրողներն իրենց ընտրությունը խարսխում են երկու հիմնավորումների վրա՝ «գաղափարախոսական» եւ «նյութական»: «Գաղափարախոսական» ընտրողն ավանդաբար քվեարկում է այս կամ այն քաղաքական ուժի օգտին, «նյութականը»՝ ականջալուր է լինում, առաջին հերթին, քաղաքական գործիչների խոստումներին: Իրականության մեջ «գաղափարախոսությունը» եւ «նյութականությունը» հաճախ փոխում են տեղերը: Արդյունքում՝ անհնար է հաղթել ընտրություններում սոսկ այն հստակ ընկալման հաշվին, թե ինչ է քաղաքական գործիչներից սպասում լսարանը: Բրենանի ու Լոմասկու կարծիքով, հենց այդ պարադոքսով է պայմանավորված ժողովրդավարական հասարակության թուլությունը եւ, միաժամանակ, ուժը. քաղ-

տեխնոլոգների ողջ ցանկությամբ հանդերձ, ընտրողին հնարավոր չէ ծրագրավորել:

Ամերիկացի գիտնականներ Շոն Բոուլերը եւ Թոդ Դոնովանը «Պահանջելով փոփոխություններ» գրքում ապացուցում են այլ կանխադրույթ: Նրանք ելնում են այն բանից, որ առավել պատասխանատու քվեարկությունների` օրինակ, հանրաքվեների ժամանակ, ընտրողներն ընդունում են որոշումներ` հաշվի առնելով երկու գործոն. իրենց անձնական շահերը եւ տեղեկատվությունը, որին իրենք տիրապետում են: Եթե ընտրողները սատարում են, մասնագետների տեսակետից, անսպասելի առաջարկությունների կամ քվեարկում «կասկածելի» թեկնածուների օգտին, դա ամենեւին էլ չի նշանակում, թե լսարանին հիմարացրել են կամ երկրի քաղաքացիներն ընդունակ չեն ճիշտ որոշում կայացնելու: Բոուլերի եւ Դոնովանի կարծիքով, իրականում, դեպքերի ճնշող մեծամասնությունում ընտրողները կատարում են միանգամայն խելամիտ ընտրություն. ընտրական տեխնոլոգիաների մասնագետները, լրագրողները եւ պետական պաշտոնյաները պարզապես անկարող գտնվեցին հասկանալու ժողովրդի իսկական տրամադրությունները:

«Հակասություններ ընտրողի պահվածքում» ակադեմիական ժողովածուի խմբագիրներ Ռիչարդ Նիեմին եւ Յերբերտ Վեյսբերգը կազմել են ընտրողների պարադոքսային պահվածքի մասին հոդվածների հավաքածու: Նրանց տվյալներով, ընտրողի պահվածքը կարելի է կանխատեսել` տիրապետելով նրա ութ հիմնական բնութագրերի մասին տեղեկատվությանը: Դրանցից են, օրինակ, ընտրողի տնտեսական եւ սոցիալական բնութագրիչները, երկարաժամկետ քաղաքական մոլությունները, քաղաքական հրատապ խնդիրների վերաբերյալ տեսակետը, երկրում ու անձնական կյանքում ներկայիս իրավիճակի գնահատականը, գործող իշխանության հանդեպ նրա գնահատականը եւ այլն: Սակայն այստեղ ծագում է գլխավոր հարցը. քվեարկության պահին թվարկված գործոններից որը կլինի վճռորոշ: Եվ տեղում ի հայտ է գալիս հետաքրքիր պարադոքս. ընտրողը հաճախ ինքն ի վիճակի չէ նկարագրել իր նախապատվությունների համակարգը: Օրինակ, նա չի կարողանում որոշում ընդունել, թե իր համար որն է առավել կարելուր` ներկայիս իշխանության աշխատանքի արդյունքները, թե՞ իր անձնական քաղաքական հակումները:

Այս պատճառով ընտրությունների օրն ընտրողը հաճախ գործում է պահի ազդեցության տակ: Նրա կամքի արտահայտման վրա ի գորու են ազդել ամենաանկանխատեսելի գործոններ: Այսպես, օրինակ, որեւէ

կուսակցության ցուցադրական քարոզչություն մի ընտրողի, որը վաղուց է այդ կուսակցությանը համակրում, կարող է վերամբարձ եւ հիմար թվալ, ուստի նա կհրաժարվի նրան կողմ քվեարկելուց, իսկ մյուսին՝ մրցակից քաղաքական ուժին պատկանողին, ընդհակառակը՝ խելացի ու վառ, ուստի նա իր ձայնը կտա նրան:

«Քվեարկելով ծրագրի օգտին» գրքի հեղինակ Սթիվեն Նիքոլսոնն ապացուցում է, որ ընտրողը դեպքերի մեծամասնությունում քվեարկում է՝ գնահատելով իրադրությունը համալիր ամբողջության մեջ: Օրինակ՝ եթե խոսքը տեղական իշխանության մարմինների ընտրությունների մասին է, նա վերլուծում է իրադրությունը ոչ միայն իր շրջանում կամ քաղաքում, այլև ողջ երկրում: Այսինքն՝ Նիքոլսոնի կարծիքով, քաղաքական գործիչներին, կամա-ակամա, հարկ է լինելու համակերպվել ոչ միայն «նեղ», այլև «լայն» օրակարգին: Ցանկացած քվեարկություն ընտրողի համար հանդիսանում է հարցերի լայն շրջանակի հանդեպ սեփական կարծիքի արտահայտման միջոց, եթե անգամ նա ինքն այդ մասին չի խորհրդածում: Ամերիկյան նահանգներում մի քանի ընտրությունների վերլուծության հիման վրա Նիքոլսոնը ցույց է տալիս, որ «նեղ» ու «լայն» օրակարգերը խիստ քմահաճորեն են իրար ծածկում: Այսպես, օրինակ, հարկերի իջեցման մեջ շահագրգռված ընտրողները հրաժարվել էին քվեարկել այն քաղաքական գործիչների օգտին, որոնք խոստացել էին դրանք նվազեցնել. պատճառը թեկնածուների դիրքորոշումն էր միանգամայն այլ հարցերում, օրինակ՝ նրանց վերաբերմունքը գլոբալ տաքացմանը: Այս իրավիճակում ընտրողի վրա վիթխարի ազդեցություն են գործում զանգվածային լրատվամիջոցները, որոնք ձեւավորում են իրական՝ հաճախ քվեարկության թեմատիկային չհամընկնող օրակարգ:

«Ռացիոնալ ընտրողի մասին առասպելը» գրքի հեղինակ, տնտեսագետ Բրայան Կապլանն ապացուցում է, որ դեպքերի մեծամասնությունում ընտրողները, որոնք տեսականորեն պետք է ընդունեն խելամիտ/ռացիոնալ որոշումներ, կատարում են միանգամայն իռացիոնալ ընտրություն: Օրինակ, շատ երկրներում առկա են իռացիոնալ տնտեսական վախեր:

Մյուս կողմից, թեև «աղքատ» պետությունների բնակիչները նախընտրում են գաղթել «հարուստ» երկրներ, սակայն տեղական ընտրություններում նրանք ամենեւին էլ ոչ միշտ են սատարում քաղաքական գործիչներին, որոնք փորձում են տեղական հողին պատվաստել «հարուստ» երկրներում առկա պրակտիկան: Կապլանը գտնում է, թե այդտեղ է դրսևորվում քաղաքացու ընտրությունը: Եթե նա հեռանում է այլ երկիր, ապա հրաժարվում է ազգային հպարտության զգացումից

(հոգեբանական շահ)՝ ընտրելով առավել բարձր կենսամակարդակ (նյութական շահ): Եթե նա մնում է հայրենիքում, ապա ձեռք է բերում հոգեբանական շահ, բայց հրաժարվում է նյութականից: Կապլանը պնդում է, թե «մարդիկ ցանկանում են հավատալ նրան, որին հավատում են մյուս մարդիկ»: Խիստ բարդ է որոշել, թե առաջին անգամ երբ եւ ինչու են առաջացել նման հայացքներ: Սակայն այդ հայացքներն անմիջական ազդեցություն են թողնում ցանկացած ընտրության արդյունքների վրա:

Կապլանն ապացուցում է, որ կրթված (այսինքն՝ իրավիճակն առավել լավ հասկացող) մարդիկ ընտրությունների գնում են ավելի հազվադեպ, քան քիչ կրթվածները: Դրա արդյունքն է հանդիսանում իշխանությունում հանպատրաստից մարդկանց հայտնվելը եւ անմիտ որոշումների ընդունումը: Ընդ որում, եթե քաղաքական գործիչներն իրոք կատարեին իրենց ընտրողների բոլոր ցանկությունները, ապա դա ցանկացած երկրի համար կբերեր աղետալի հետեւանքների: Ուստի քաղաքական գործիչները ստիպված են հաշվեկշռել: Կապլանի գնահատմամբ, գործնականում բոլոր քաղաքական գործիչները հարկադրված են ընդունել ժողովրդականություն վայելող, բայց հիմար որոշումներ, որպեսզի գոհացնեն իրենց կողմնակիցներին: Հակառակ դեպքում, նրանք կդադարեն լինել քաղաքական գործիչներ:

«Դժվար ընտրություն, հեշտ պատասխաններ» գրքի հեղինակներ Մայքլ Ալվարեզը եւ Ջոն Բրեմը նշում են, որ քաղաքականությունը՝ դա միշտ էլ գաղափարների բախում է: Ընդ որում, հստակ քաղաքական մոլություններ ունեցող ընտրողներն անենելին ոչ միշտ են իսկապես հասկանում, թե ինչի մասին է խոսքը: Նրանք ո՛չ քաղաքական գործիչների մանրակրկիտ բացատրություններով եւ ո՛չ էլ նույնիսկ ՋԼՄ-ի հրապարակումներով են կողմնորոշվում, այլ քննարկման առարկայի մասին իրենց ինչ-որ պատկերացումներով: Արդյունքում՝ ընտրողը ոչ թե մանրամասն վերլուծված եւ ստուգված տեղեկատվության հիման վրա է որոշում կայացնում, այլ գնահատելով փաստերի, առասպելների ու մոլությունների արտասովոր շիլափլավը, որ առաջանում է իր գլխում:

Washington ProFile

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գագիկ Տեր-Հարությունյան ՀՀ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ	1
Ռուբեն Մելքոնյան ՎԵՐԱՊՐԱԾ ՀԱՅԵՐ. ԷՐՄԵՆԻ ՎԱՐԹՈ ԱՇԻՐԵԹԸ	6
Դավիթ Հովհաննիսյան ԱՇԽԱՐՀ՝ ԱՌԱՆՑ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ԵՎ ԱՆԿԱՐԳՈՒԹՅԱՆ	11
Սարգիս Հարությունյան ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ	15
Սեւակ Սարուխանյան ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ	20
Արաքս Փաշայան ԻՍԼԱՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ	24
Միխայիլ Յուրեւ ԷԹՆՈԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԱՄՆ «ՄԵԾ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ» ԾՐԱԳՐՈՒՄ	28
Ժողովարդավարութեան Պարագոյններին. ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ	36

*Շապիկին պատկերված է
Նազիկ լիճը (Տարոն)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Սելիք-Աղանյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ ՕՄՍ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: